№ 143 ՇԱԲԱԹ, 4 ՅՈՒԼԻՍԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 4 ՅՈՒԼԻՍԻ № 143

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ԱՊՍՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԴՐԱՄՆԵՐ

ռուսական և հնագոյն—ոսկէ, արծաթէ և պղնձէ. ոսկէ, արծաթէ և պղնձէ հնագոյն առարկաներ. ապակեայ հնագոյն ամաններ—

ԳՆՈՒՄ ԵՄ։

Հասցէս՝ Севастополь, Азовская № 51. В. И. Людзеръ. առ. 440. 3—3

ԲԺԻՇԿ

Տ. ՄԱԿԱՐԵԱՆՑԸ,

մասնագէտ՝ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների, վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը ՊԵՍՏԻԳՈՐՍԿՈՒՄ, Верхній бульваръ, д. Зипаловой.

առ. (օ. մ.) 405. 12—9

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐ

Բագու, 2 յուլիսի

Յուլիսի 2-ին, ժողովրդի խուռն բազմութեան ներկայութեամբ, տեղի ունեցաւ պատերազմի դաշտում ընկած՝ հայկական դրուժինայի քաջարի հրամանատար պօրուչիկ Գրիգոր Աւշարեանի թաղումը։

Դամբանական ճառեր խօսեցին Թեմական առաջնորդ Կարապետ եպիսկոպոս, հանգուցեալի ընկերներ Սիմէօն Հովուեան, Ալեքսանդր Տէր-Վարդանեան, Ղազանճեան և Շապանեան։

Սգերթին հետևում էր նաև զինուորական երաժշտախումբը և հետևակ զօրք։

Դագաղի վրա դրված էին 15-ից աւելի պսակներ։

Հովուեան, Տէր-Վարդանեան

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 յուլիսի

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Փոքր-Ասիայի նահանգապետներին պատուիրագրված է յարքունիս գրաւել ապագայ բերքը զօրքի պէտքերի համար։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Կ. Պոլսից տեղեկացնում են, որ Թիւրքաց կառավարութիւնը, հրաժարվելով Եգիպտոս արշաւելու ծրագրից ահագին դժուարութիւններ ծագելու պատճառով, վճռել է տեղափոխել արաբական զօրքերին, ուղարկելով նրանց մի մասը դէպի կովկասեան պատերազմաբեմը, մի մասը՝ Դարդանէլ, իսկ մնացածը՝ Կ. Պոլսի շրջակայքը և Սև-ծովի մօտ։ Այդ զօրքերի գլխաւոր հրամանատար Ջէմալ-փաշան շուտով գալու է Կ. Պոլիս։

—

(Լրագիրներից)

◆ «Баку»-ն հաղորդում է. «Կ. Պոլսում գաղտնի ոստիկանութիւնը սկսել է տերրոր, որ մոռացնել է տալիս Աբդիւլ-Համիդի ամենավատ ժամանակները։ Ժողովրդական մասսաները երազում են յեղափոխութեան մասին և զինուորական կուսակցութեան տապալմանը»։

◆ Բուխարէստից հաղորդում են, որ Կ. Պոլսում շարունակվում է լրտեսութեան մէջ կասկածվող հայերի ձերբակալումը։ Զօրքի մէջ բազմանում են դասալիքները։

◆ Կոնֆլիկտ է ծագել Էնվէրի և երիտասարդ-թիւրքերի կոմիտէի միջև. Էնվէրը պահանջել է խրախուսել թիւրք-բուլգարական բանակցութիւնները, բայց կոմիտէն մերժել է. այն ժամանակ Էնվէրը մարտկոց է կառուցել Սարայ-Բուռնուի դիմաց և սպառնացել է ռմբակոծել Բ. Դուռը։

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են, որ Կ. Պոլսում երիտասարդ-թիւրքերի կոմիտէն վճռել է ծայրայեղ միջոցներ ձեռք առնել յոյների դէմ։ Ամեն ճնշումներ գործադրվում են յոյն վաճառականների համար։ Վճռված է նաև վերացնել պատրիարքի արտօնութիւնները և արգելել յոյն լեզուի դասաւանդութիւնը։

◆ Թիւրքերն առաջարկել են Ռուսաստանին փոխանակել գերիներին, ըստ որում նրանք կամենում են ամեն մի ռուս նաւաստու դիմաց ստանալ հինգ թիւրք գերի։

◆ Սօֆիայից հեռագրում են «Р. В.»-ին, որ Թիւրքիան բաց է թողել պետական գանձատան 150 միլիօն ֆրանկի արժեթղթեր, որ ստիպողաբար բաժանում է ազգաբնակութեան մէջ։

◆ Դաշնակցութիւն կուսակցութեան օրգան «Դրօշակը» մի հեռագիր է ուղարկել Թիւրքաց ներքին գործերի մինիստր Թալէաթ-բէյին, որին յայտնում է, թէ անկախ կուսակցութիւնից և իր անձնական պատասխանատւութեամբ իրազեկ է անում Թիւրքաց կառավարութեան ներկայացուցիչներ «Մ. և Ա.» կոմիտէի անդամներին, որ հայ ժողովրդի դէմ և առ հասարակ բովանդակ օսմանեան պետութեան դէմ ուղղված ոճիրների ամբողջ պատասխանատւութիւնն ընկնում է թէ բարոյական ու թէ իրաւական տեսակէտներից բացառապէս նրանց վրա։

◆ «Міръ»-ի տեղեկութիւնների համաձայն, Բուլգարիայի բանակցութիւնները Թիւրքիայի հետ խզվել են։ Թիւրքիան պատրաստակամութիւն յայտնեց զիջել միմիայն այն դէպքում, եթէ Բուլգարիան հանդէս գայ գերմանացիների օգտին. Բուլգարիան կտրականապէս մերժեց։

◆ Դարդանէլի և Կ. Պոլսի բերդերում գտնվում են մօտ 30 հազար գերմանացի։

ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)

2 յուլիսի

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Թիւրքաց կառավարութիւնը Եւրոպայի հասարակական կարծիքի առաջ ինքն իրան հայերի վերաբերութեամբ արդարացնելու նպատակով՝ հրատարակել է հրահանգագիր, որ ուղարկվել է Թիւրքիայում գտնվող օտարերկրեայ ներկայացուցիչներին և որի մէջ ասված է, թէ պատերազմական գործողութիւնների շրջանի մէջ մտնող բոլոր նահանգներում, նաև այնտեղ, ուր կենտրոնացած են զօրքեր, հայ ազգաբնակութիւնը հեռացված է, որպէսզի նա հնարաւորութիւն չունենայ ընկնել Ռուսաստանի ազդեցութեան ներքոյ, Ռուսաստանի՝ որ խոստացել է աջակցութիւն ցոյց տալ հայերին։

Թիւրքիայից հայ գաղթականներից ստացված տեղեկութիւնները նկարագրում են հայերի դրութիւնը ամենամռայլ գոյնով։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

(Սեփ. Թղթակցից)

Վան, 23 յունիսի

. . . .

Բայց նախքան այդ՝ Բիթլիսի և նրա շրջակայ հայ գիւղերի բնակչութիւնն էլ ջարդվել է. գոնէ այդպէս են հաւատում Բիթլիսի գիւղերից դէպի ռուս. բանակը փախստական եկող հայերը։ Նրանք պատմում են, որ թէ քաղաքը և թէ գիւղերը անվնաս են եղել մինչև 15 օր առաջ, բայց ռուսաց բանակի առաջխաղացութիւնից և Սուրբ գիւղը լքելուց յետոյ, այդ ժամանակ Բիթլիսում հայերին մունետիկների միջոցով հաւաքել են տուել մի դաշտում և բոլորին էլ հրացանազարկ են արել ճիշդ այն կերպով, ինչպէս արել էին Արճէշում. կոտորել են նոյնպէս Ախլաթ և Բիթլիսի ուրիշ շրջակայ գաւառների բնակիչ հայերին և գիւղերն էլ այրել։

Ասում են, որ արեան բաղնիքն էլ կատարել է Վանի վալի Ջէվդէթ-բէյ, որ գտնվում էր Բիթլիսում. Այնտեղի թիւրք կառավարութիւնը հայերին կոտորելու համար նոյն պատրուակը չունէր, ինչ որ ունէր Վանում. Ջէվդէթը հայերին համարում էր ապստամբ, որովհետև բանակից դասալիք եղել և զինուոր չէին տուել ընդհանրապէս. մինչդեռ Բիթլիսում 18—50 տարեկանները զինուոր էին գնացել ու թէև զինաթափ, բայց իբրև բեռնակիր ու գործաւոր աշխատում էին բանակում։ Կոտորել բոլոր հայերին—սա է եղել երիտասարդ-թիւրքերի կառավարութեան ընդհանուր կազմակերպված կոտորածների նախօրեակը՝ յատուկ ձիաւոր սուրհանդակներ էին շրջել բոլոր այն քիւրդական գիւղերը, որոնք հեռագրական գծերից հեռու էին գտնվում և տարել էին Մէհմէդ Րէշադի, այսինքն Իթթիհադ կուսակցութեան «ֆէրմանը», կոտորելու անխնայ հայերին, իսկ Ջէվդէթ-բէյ քաղաքում մունետիկ էր կանչել տուել, թէ ով որ հայ պահէ իր տանը կամ նրա փախուստին օգնէ, մահվան կը դատապարտվի։ Այս հրամանն է, ահա, որ այժմ գործադրվել է Բիթլիսում, ինչպէս նաև նրանից առաջ Խնուսում, որպէս պատմում են այնտեղի փախստական հայերը, որոնք Մանազկերտի վրայով քաղաքս են եկել ու հայ կամաւորների բանակում զինուորագրվել։

Բիթլիսի գաւառներից Խիզան, Սպարկերտ, Մամրտանք և Ոզիմ գաւառները բարեբաղդաբար զերծ են մնացել կոտորածից, թէև նրանք՝ իբրև չէյխ Ջէլալէդդինի երկրում բնակվողներ՝ կոտորվելու աւելի շատ երկիւղ ունէին։ Տեղացի մի քանի խումբ զինված հայեր նախ Խիզան ու Շէնիձոր գաւառների հայերին պարպել ու փոխադրել են Սպարկերտ, ուրտեղ լեռնային դիրքեր են գրաւել, իրանց քիւրդ դրացիների հետ էլ քաղցրութեամբ են վարվել, տեղական միւդիրն էլ բարեացակամ է գտնվել դէպի հայերը, մինչև որ հայ կամաւորների մի խումբ Մոկաց գաւառից անց կենալով Սպարկերտ՝ նոյնտեղ հաւաքված հայերին ամբողջութեամբ փոխադրել է տուել Կաւաշում, ուր մնում են դեռ, սպասելով որ Բիթլիսը, հետևաբար իրանց գաւառն էլ գրաւվի և իրանք հնարաւորութիւն ունենան վերադառնալու իրանց երկիրը։ Իսկ աւելի հարաւում գտնված քիւրդախօս հայերը՝ Բարվարում, Շիրվանում և այլուր կոտորվել են, թէև դեռ հաստատ տեղեկութիւններ պակասում են։

Նախապէս գրել եմ, որ երբ մայիսի սկիզբներում թիւրքերը փախան քաղաքից, նրանք մեծ մասամբ նաւեր նստեցին և ելան Դատվան, որ ծովի հարաւ-արևմտակողմը Բիթլիս տանող ճանապարհի գլուխն է։ Թէ նրանց փոխադրող 40 նաւերը և թէ նրանց միջում գտնվող 150-ի մօտ Աւանցի նաւավարները գտնվում էին մինչև այժմ Դատվանում, ուր թիւրքերը նրանց՝ հսկողութեան տակ էին պահում, որպէսզի Վան վերադառնալու դէպքում՝ նոյն նաւերով վերադառնան։ Իսկ այժմ հաւաստի կերպով իմացվել է, որ այդ նաւավարներն էլ անխնայ հրացանազարկ են եղել ու սպանվել, որոնցից հազիւ երկուսին աջողվել է լեռների վրայով փախչել ու քաղաքս հասնելով պատմել սոսկալի իրականութիւնը. սա էլ զուգադիպել է Բիթլիսի կոտորածներին։ Պատմում են, որ նաւավարները լալով յիշեցրել են դահիճներին, որ իրանք աւանցիները թիւրքերին անչափ ծառայութիւններ են արել և արժանի չեն իրանց ազգակիցների հետ հաւասարապէս կոտորվելու։ «Մենք ինչ անենք,—պատասխանել են,—բարձրագոյն հրաման է. եթէ մենք չը գործադրենք, մեզ էլ կը սպանեն»։

Եւ յիրաւի՝ աւանցիները մեծ ծառայութիւն արին թիւրքական կառավարութեան՝ ազատվելու յոյսով. այն ժամանակ, երբ Վանում 30-օրեայ յուսահատ կռիւ էր մղվում և մահու ու կենաց կրիտիկական օրեր էինք ապրում, աւանցիներն իրանց թոնիրներում հաց էին պատրաստում թիւրք զօրքի համար և իրանց մէջքերով փոխադրում, իսկ Աւանց գիւղի գիւղապետը լուր է ուղարկում բոլոր շրջակայ հայ գիւղերին՝ չը դիմադրել բնաւ կառավարութեանը զէնքով, այլ թող Աւանց գան սուլ. դրօշակ տանելու և իրանց գիւղերի վրա պարզելու՝ իբրև նշան հնազանդ հպատակութեան, որպէսզի զերծ մնան կոտորվելուց։ Այդպէս էլ արին Թիմար գաւառի տասնեակ հայ գիւղերը. և իրաւ, մի ժամանակ էլ հանգիստ ու միամիտ իրանց վարուցանն արին, շատերը վստահացած իրանց զէնքերն անգամ յանձնեցին, երբ պահանջվեց իրանցից յանձնել զէնքերը։ Թիւրքերը մտնում էին գիւղերը, բայց դրօշակը տեսնելով հեռանում էին. իսկ վերջում նրանց ամենքին էլ կոտորեցին, և այդ տեղերում ջարդն աւելի սաստկացաւ, որովհետև մարդիկ ապահով համարելով իրանց՝ յանկարծակիի են եկել ու փախչելու հնարաւորութիւն չեն ունեցել։ Ազատ մնացին միայն աւանցիները, որովհետև թիւրքերը փախչելու համար պէտք ունէին դեռ նրանց նաւերին, իսկ այժմ Աւանցի նաւավարների սպանվելուց յետոյ՝ լազ նաւավարներ են բերել, ասում են, և նաւերը պահում են դեռ իրանց հսկողութեան տակ՝ մինչև ծովեզերքի այդ փոքրիկ շերտն էլ գրաւվի։

Անցեալ շաբաթվայ վերջերում Իրանից քաղաքս հասան Աբդիւլ Րզաք և Մուստաֆա-բէյերն իրանց ձիաւոր կամաւորներով, միանալու համար ռուսական բանակին, և, անշուշտ սրանից էլ սիրտ առած, քիւրդերը հազարներով վերադառնում ու հնազանդութիւն են յայտնում, որից յետոյ իրանց տեղերումն էլ հաստատվում են. վերադառնում են նաև այնպիսիները, որոնք երկու ամիս առաջ անխնայ կոտորել էին իրանց հայ դրացիներին և տարիներից ի վեր հայերին իրանց զուլումների կօշմարի տակ պահում։ Սրանցից մէկն է Լէվլի աշիրէթի պետերից Խուրշիդ աղան, որ Ցուսկան-որդւոց վանքի վանահայր Մանուէլ քահանային սպանել էր Բերկրիի գաւառում, այն ինչ նա հաւատացած նրանց խօսքերին, թէ հնազանդութիւն յայտնող հայերին ոչինչ վտանգ չը կայ, գիւղից-գիւղ ընկած՝ յորդորում էր հայ զինուորներին, որ իրանց զէնքերը վայր դնեն ու գնան բանակում ծառայելու. հաւաքել էր իբրև փրկանք նաև շատ փող, բայց այդ ամենից յետոյ հաւաքված հայերին տարել ու հրացանազարկ էին արել դաշտում. իսկ այդ խժդժութիւնը կատարել էր յիշեալ Խուրշիդ-աղան, որը այժմ, հայերի ցուցմունքների վրա, բանտարկվել է։

Ինչպէս յայտնեցի նախորդ թղթակցութեամբս, գաւառներում մնացեալ ժողովրդի բեկորներում համաճարակ հիւանդութիւնները բազմաթիւ զոհեր են տանում, և թէ Եղբայր. Օգնութեան Յանձնաժողովը կոչ է ուղղել Վեհ. Հայրապետին և պատերազմից վնասվողների համար կազմված յանձնաժողովներին Կովկասում և խնդրել նոր բժիշկներ և սանիտարական օգնութիւններ։ Երկու օր առաջ քաղաքս հասան բժ. Համազասպ Օհանջանեան և Սարգիս Աբովեան Կովկասից, իրանց հետ ունենալով բժշկական դեղեր ու կազմածներ՝ մի հիւանդանոց բաց անելու քաղաքումս, որի համար որոշվել են Կենտրոնական և Արարուց վարժարանները՝ վերջինը տարափոխիկ հիւանդութիւնների համար։ Այս շաբթին տեղս հասաւ նաև հայ վիճակագիր Ա. Դօն։

Մորակ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

2 յուլիսի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Թշնամին ուժեղացնելով իր զօրքերը Րիգա-Շավլի շրջանի հիւսիսային մասում՝ յուլիսի 1-ին յարձակման դիմեց Գազէնպօտի մօտից Գոլդինգէնի ուղղութեամբ, նաև Շրունդէնի մօտից մինչև Պօպելյան։ Մեր հեծելազօրքերը և առաջապահ զօրամասը դիմադրում են թշնամուն Վինդավա և Վէնտա գետերի անցքերում և այլ յարմար դիրքերում։

Նէմանի յանկոյս թշնամին լոյս յուլիսի 1-ի գիշերը թնդանօթ ու հրացան էր պարպում լայն ռազմաճակատով, բայց յարձակման էր ձեռնարկում սոսկ սակաւաթիւ հետևոտն զօրագնդերով, որոնց ամենուրեք ցիրուցան արինք մենք։

Միևնոյն գիշերը մենք վանեցինք թշնամու մասնակի յարձակումը Լոմժինի ուղղութեամբ։

Պիսսայի աջ ափում և Շկվայի երկու ափերում դրութիւնը էապէս չը փոխվեց։ Թշնամին, որ նախօրեակին գրաւել էր մի քանի խրամատ, բայց կրել էր ահագին կորուստներ, յուլիսի 1-ին յարձակումները չը վերսկսեց։

Օրժիցա և Սկրօյ գետերի միջև մեր զօրքերը գտնվում են Պրասնիշից հարաւ ընկած զօրաճակատում, ուր յուլիսի 1-ին վանեցին թշնամու մի քանի յարձակում։

Վիսլայի ձախ ափում փոփոխութիւն չը կայ։

Վիսլայի և Բուգի միջև թշնամին յուլիսի 1-ին մի քանի յարձակումներ գործեց, բայց վանվեց։

Բուգի և Զօլօտայա-Լիպայի մօտ խոշոր ընդհարումներ տեղի չունեցան։

Յունիսի 30-ին աւստրիական զօրքերը յարձակման դիմեցին Նէզվիսկա-Օկնա ռազմաճակատում։

Թշնամին յարձակումների է ենթարկում Կունիշովից-Կօլանկա շրջանում կամրջամերձ դիրքերը և անցնում է Դնեստրը Իվանի-Ժօժավա և Կօսցէլնիկա-Սինկով ռազմավայրերում։

Մեր թնդանօթները յուլիսի 1-ին մի քանի կէտում աջողութեամբ ռմբակոծում էին թշնամու գետն անցնելու ժամանակ և տեղ-տեղ ստիպեցին նրան կանգ առնել։ Կռիւը շարունակվում է։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

2 յուլիսի

ՊԱՐԻԶ.—Մամուլի բիւրօն տալիս է հետևեալը.«Գերմանացիք յունիսի 14-ից սիստեմատիկաբար ռմբակոծում է Արրասի զանազան թաղամասերը։ Յունիսի 14-ին առ. ժ. 8-ից մինչև ցերեկ. ժ. 2-ը, նաև յունիսի 17-ին երեկ. ժ. 6—7 չափազանց ուժեղ թնդանօթաձգութիւն էր։ Յունիսի 20-ին բռնկվող նիւթերով կատարված ռմբակոծութիւնը առաջ բերեց ուժեղ հրդեհ։ Յունիսի 22-ին իր կրակը կենտրոնացրեց տաճարի շուրջը և հրդեհեց Սէնվաասում եպիսկոպոսի պալատը, որ դարձված էր թանգարան. պալատից սրբազարդերը և արխիվները դուրս էին հանված»։

Պաշտօնական հաղորդագրութիւն.«Բելգիայում գերմանացիք ռմբակոծութիւնից յետոյ յարձակման ենթարկեցին անգլիական զօրքերի գրաւած խրամատները Պիլկէնից դէպի հարաւ-արևմուտք, բայց հեշտութեամբ վանվեցին։ Արրասի հիւսիսում տեղի էին ունենում գիշերով կռիւներ ձեռքի ռումբերով։ Արրասը և Սուասօնը ռմբակոծվում են լայնաբերան թնդանօթներից։ Շամպանիում ականային կռիւ է։ Արգօններում գերմանացիների յարձակումները վերջնականապէս կանգ առան։ Ապրէմօնի անտառում հրացանաձգութիւն է և թնդանօթային կռիւ։ Բելգիայում թշնամին ռմբակոծեց Ֆիւռնը և Օօստդիւնկէրկը։ Իբրև վրէժ մենք ռմբակոծեցինք գերմանացիների գրաւած Միտէլկերկէն։ Սուշէի մօտ գերմանացիք երկու անգամ ապարդիւն փորձ արին դուրս գալ իրանց խրամատներից։ Ամբողջ զօրաճակատում թնդանօթաձգութիւն էր։ Արրասում առանձնապէս տուժեց քաղաքի մի մասը տաճարի մօտ, և սպանվեցին 3 քաղաքացի։ Էն գետի հովտում բաւական ուժեղ թնդանօթային կռիւ է։ Արգօններում մի քանի տեղ մենք ամրացանք գերմանական խրամատներում։ Վօգէզներում կատաղի ռմբակոծվում է Լաֆօնտենէլը։

«Մեր օդագնացներին աջողվեց մեծ աւերումներ առաջ բերել երէկ Լիբէկուրի կայարանում, նաև իրարանցում ձգել Դուէի և Լիլլի միջև բանակած զօրքերի մէջ։ Օդագնացները 24 ռումբ նետեցին շինութիւնների և երկաթուղագծի վրա։ Աէրօպլաններում գտնվող թնդանօթները կրակեցին գնացքը, որ ստիպված եղաւ կանգնել երկու կայարանների միջև, նաև ստիպեցին գերմանական «Ալբատրօսի» տիպի մի աէրօպլանի իջնել»։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

2 յուլիսի

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակը յայտարարում է, որ յուլիսի 1-ին դրութիւնը նախկինն էր։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

2 յուլիսի

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բեռլինից հաղորդում են, որ գերմանական կայսրութեան կազմի մէջ մտնող պետութիւնների ֆինանսների մինիստրների կոնֆերենցիան համաձայնել է ռէյխստագին օրինագիծ ներկայացնել նոր գումարայատկացումների մասին, նաև մուծել առանձին պետական զինուորական հարկ։

ՆԻՒ-ԵՈՐԿ.—«Նիւ-Եորկ Հէրալդ» լրագիրը առաջնորդող յօդուածում յուզմունք է արտայայտում գերմանական այն սուզանաւի գործողութիւնների առիթով, որ ստիպեց ամերիկեան «Նորմանդիա» նաւին պաշտպանողի դեր խաղալ այն ժամանակ, երբ սուզանաւը ընկղմում էր ռուսական «Լէօ» նաւը։ «Բոլոր լկտի վարմունքներից և բոլոր անամօթութիւններից,—ասում է լրագիրը,—այդ վարմունքը հանդիսանում է ամենածանր վիրաւորանք, որպիսին հասցրեց Գերմանիան Ամերիկային և ամերիկեան առևտրին, մի վարմունք, որ չունի իր հաւասարը ծովային պատերազմի պատմութեան մէջ։ Այդ միջադէպը առաջ կը բերէ աւելի լարված յարաբերութիւն Ամերիկայի և Գերմանիայի միջև»։

ԴԱՅՐԷՆ.—Բժիշկ Կիմուրան կազմեց ճապոնական Կարմիր Խաչի խումբ, որ մեկնելու է Ռուսաստան։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Բացվեց հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութեան լիազօրների համագումարը, որ քննելու է զօրքի համար հաց գնելու հարցը։ Մասնակցում են աւելի քան 100 ներկայացուցիչ։ Համագումարը բացեց երկրագործութեան գլխաւոր վարչութեան կառավարիչ ստատս-սեկրետար Կրիվօշէինը մի ճառով, որ վերջացրեց հետևեալ խօսքերով. «Պատերազմի երկարատևութեան դէպքում վերջնական վճռական խօսքը կարտասանէ այն երկիրը, որ ընդունակ է մինչև վերջը սննդել սեփական միջոցներով թէ իր ազգաբնակութեան և թէ իր զօրքին, թէկուզ այդ զօրքի թիւը անհամար լինի»։

Գլխաւոր ինտենդանտ գեներալ Շուվաևը ներկայ եղողներին արտայայտեց խորին շնորհակալութիւն զօրքերի անունից նրա համար, որ զօրքերը ունեցան իրանց մթերքները լիակատար չափով և լաւ յատկութեան։

Համագումարը ձեռնարկեց իր խնդրի քննութեան։

ԼՈՆԴՈՆ.—Գրէյը առաջին անգամ ներկայ գտնվեց կաբինետի նիստում աչքերի տկարութեան պատճառով ստացած արձակուրդից յետոյ։

Մէլբուրնի քաղաքագլուխը փոխադրել է 500 ֆունտ ստէրլինգ յօգուտ քայքայված Լեհաստանի նպաստի ֆոնդի։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Քննելով պատերազմաբեմում ստեղծված դրութիւնը, «Դագէնսնիհէտէրը» անհաւանական է գտնում, որպէս զի գերմանացիք յոյս դնեն ճեղքելու ֆրանսիացիների ռազմաճակատը Արգոնեան անտառի մօտ։ Առ հասարակ,—ասում է լրագիրը,—հազիւ թէ հաւանական նկատվի, թէ գերմանացիք կարող են այժմ հեռանալ արևելեան ռազմաբեմից դէպի արևմտեան ռազմաբեմը։ Լրագիրը կարծում է, որ գերմանացիք կը փորձեն ճեղքել ռուս զօրքերի ճակատը Վիսլայի և Բուգի մօտ։

ՏՕԿԻՕ.—Արտաքին գործերի մինիստրը, որ հանդէս է գալիս ճառերով գաւառներում իբրև դօսիկա կուսակցութեան լիդէր, ընդգծեց, որ Ճապոնիայի քաղաքականութիւնը յենվելու է Անգլիայի դաշնակցութեան և Ռուսաստանի համաձայնութեան վրա։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Standard»-ին հեռագրում են Ցիւրիխից, որ Գերմանիան մտադիր է հանդէս բերել նոր 18 զօրաբանակ, մօտ 750,000 մարդուց բաղկացած։ Այդ զօրքերը բաղկանալու են գլխաւորապէս երկրորդ կարգի լանդշտուրմիստներից, որոնք տակաւին վարժված չեն։ Զօրաճակատում նրանք երևալու են օգոստոսի սկզբին։ Ըստ որում ներկայումս ռուսական հարաւ-արևմտեան ռազմաճակատում կռւող զօրքերի մի մասը ետ է կանչվելու Գերմանիա՝ բերդային ծառայութեան համար։

◆ Ամստէրդամից հաղորդում են, որ գերմանացիք Պշէմիշլի մօտ կորցրել են յամենայն դէպս 150,000 մարդ։

◆ Չինաստանից մօտ 300,000 կուլիներ են գալիս Ռուսաստան՝ բերքը հաւաքելու համար։

◆ Ամերիկան նոր վճռական վերջնագիր է ուղարկում Գերմանիային։

◆ Ֆրանց Յօվսէփ կայսրը մեկնում է իտալական զօրաճակատը՝ զօրքերին ոգևորելու համար։

◆ Աւստրիացի օդագնացները պատրաստվում են աէրօպլաններով ռումբեր նետել Հռոմի վրա։

◆ Գերմանիան պահանջում է Ռումինիայից որոշակի պարզել իր դիրքը։

◆ Ամերիկան պատրաստվում է խզել իր դիւանագիտական յարաբերութիւնները Գերմանիայի հետ։

◆ Ինչպէս հաղորդում է «Н. Вр.»-ն, յուլիսի 1-ին վերջացան ռուս-լեհական խորհրդակցութիւնները։ Շուբինսկիի տպաւորութիւնն այն է, որ շատ բաներում ձեռք է բերված համաձայնութիւն։ Ռուս անդամների կարծիքն է՝ տալ Լեհաստանին այն ամենը, ինչ վերաբերում է տեղական կազմակերպութեանը և ազգային կուլտուրային։ Ռուս ներկայացուցիչները համակրութեամբ են վերաբերվում լեզուին, հաւատին, ներքին ինքնավարութեանը՝ ազգային կուլտուրական խնդիրների սահմաններում։

◆ «Рѣчь»-ն ասում է, որ Նարէվի զօրաճակատում առաջանում են բացառապէս գերմանացիք, որոնք թւով 4 զօրաբանակից պակաս չեն։ Մերձաւոր օբեկտ ներկայանում են Ցէխանովը և Պրասնիշը։ Մեր նահանջը Օրժիցայի և Լիտինէյի միջև չը պէտք է նկատվի իբրև ընդհանուր նահանջ ամբողջ Նարէվի զօրաճակատում։ Ամենայն հաւանականութեամբ կարելի է ենթադրել, որ այստեղ սկսված կռիւները շատ յամառ են լինելու, որովհետև երկուստեք մասնակցում են շատ խոշոր ուժեր։

◆ Գերի աւստրիացիների հրացանների վրա կան յունական մակագրութիւններ։ Պարզվում է, որ Յունաստանը պատուիրած է ունեցել հրացաններ Գերմանիայում, բայց վերջինս ինքն է գործադրում այդ հրացանները։

◆ Լոձում լաբորատորիա է հիմնած խեղդող գազեր պատրաստելու համար։

◆ Բալկանեան պետութիւնների ներկայացուցիչների տեսակցութեան լուրը չէ ճշդվում։

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

(Ռազմա-արդիւնաբերական շարժման առիթով)

I

Սովորական ասացուածք է դարձել այն ակնյայտնի իրողութիւնը, որ արդի պատերազմը՝ իր ծաւալով և կռւող բանակների մասսայական բազմամարդութեամբ, չեղած երևոյթ է կազմում պատմական անցեալում։ Բայց աւելի բնորոշ է այն ոչ սակաւ շեշտված հանգամանքը, որ մեր օրերի մեծ արիւնհեղութեան մէջ ամենակարևոր և առանձնայատուկ մօմենտը կազմում է արդիւնաբերական տեխնիկան՝ իր բազմաբովանդակ իմաստով վերցրած։

Հէնց այդ մօմենտին էլ պիտի վերաբերէ մեր խօսքը։

Տեխնիքական և գիտական հնարագիտութիւնների մասնակցութիւնը այնքան խոշոր է պատերազմական արուեստի մէջ, որ նա ներկայիս վճռական նշանակութիւն է ստացել. մինչ այն աստիճան, որ իջեցրել է մարդկային-ֆիզիքական ուժերի նշանակութիւնը մինչև բաւական համեստ մակարդակ։ Ամրակազմ, զոհաբերութեան ընդունակ ֆիզիքականը, զինւորի ճարպիկօրէն կռուելու անհատական ընդունակութիւնը կամ հըմտութիւնը և նման կռւողների մեծաքանակ գնդեր ունենալը յաղթութեան ապահով շանսեր էին կամ այսպէս ասած՝ «պատերազմական բարիքներ» էին միայն հին անցեալում, երբ զինւորի անձնական առաւելութիւնները լրացնում էին ռազմական գործիքների տարրական թերութիւնները։ Ներկայումս, ընդհակառակը, «պատերազմի աստուածը» բարեթեքվում է դէպի այն բռունցքը, որը սպառազինված է տեխնիկայի արտադրած վերջին կատարելագործութիւններով։ Քանի-քանի անգամ են եւրոպական նրբակազմ, «սպիտակաձեռն», թուլակազմ փոքրիկ գնդերը ճնշել ու խեղդել ասիական և աֆրիկական լիառողջ, յաղթանդամ հրոսակների մեծակոյտ հորդաները՝ գաղութային ապստամբութիւնների ժամանակ։ Դա նշանակում է, որ ռազմական գործիքների տարրական գերազանց առաւելութիւնները լրացնում են ոչ միայն զինւորների անձնական, կուլտուրայով փափկացած թերութիւնները, այլև նոյնիսկ կըռւող ուժերի քանակական պակասը։

Ֆրանս-գերմանական պատերազմից սկսած, այսինքն մօտ կէս դարից ի վեր, նորագոյն տեխնիկայի զարգացման հայրենիքներից (Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա) ոչ մէկը չի մղել խոշոր պատերազմ (գաղութային ապստամբութիւնների ճնշումները ի նկատի չունենք այստեղ), մէկը միւսի հետ չի չափել իր ուժերը։ Թէ կատարելագործութեան ո՛ր աստիճանին էր հասել պատերազմական տեխնիկայի զարգացումը այդ ամբողջ վճռական ժամանակաշրջանում և թէ ի՛նչ թափով ու չափերով կարող էր նա յայտաբերել ու ծաւալել իր հրաշագործութիւններն ու հրէշագործութիւնները, դա մի հարց էր, որի տեսական պատասխանն էր միայն յայտնի նուրբ ստրատեգին և պատերազմական ինժեներին, իսկ փաստական, լիիւ շօշափելի պատասխանը անյայտ էր բոլորին։

Այդ հարցի ամենալրիւ բաւարարութիւնը տուաւ մեր օրերի ահեղ ողբերգութիւնը։ Նրա ամենադրական պատասխանը տուաւ գերմանական զէնքի շարունակական նուաճումների արիւնոտ պատմութիւնը 11 ամիսների ընթացքում՝ բոլոր ֆրոնտների վրա։ Գերմանական աջողութիւնը, սակայն, արդիւնք չէ ոչ նրանց զօրքի ֆիզիքական քաջամարտութեան և ոչ էլ գնդերի թւի, որ յամենայն դէպս շատ նուազ է դաշնակիցների միացեալ ուժերի հանդէպ։ Միայն պատերազմական տեխնիկայի անպայման գերազանցութեան արդիւնք է՝ գերմանական անուրանալի հզօրութիւնը։

Սա համարեա սովորական, առօրեայ ասացուածք է դարձել, առանց, սակայն, երևոյթի ամբողջ խտացած ծանրութիւնը տարկայօրէն պատկերացնելու։

B. Lucifer

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅՍ ԵՒ ԱՅՍ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 յուլիսի

ԿԱՀԻՐԷ. — Եգիպտական սուլթանի կեանքի դէմ կատարված մահափորձի քննութիւնը շարունակվում է։ Ձերբակալվել են մի քանի մարդ։

Անգլիական թագաւորը, Լորդ Կիտչէները և շատ բարձրաստիճան անձինք հեռագրով շնորհաւորեցին սուլթանին վտանգից ազատվելու առիթով։

ՓԱՐԻԶ.— Ազգային տօնը անցաւ հանգիստ ու ուղղակի սովորական ձևով, բայց և այնպէս ոգևորութեան մէջ։

Բազմաթիւ հայրենասիրական ցոյցեր կազմվեցին Ստրասբուրգ և Լիլ քաղաքների արձանների, Բէլֆորի և Կամիլ-դէ-Մուլէնի և Գամբէտտայի արձանների առաջ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Այսօր, ֆրանսիական ազգային տօնի առիթով Պետրօգրադի ֆրանսիական գաղութի անդամները ընդունվեցին ֆրանսիական դեսպանից։

ՍՊԱՀԱՆ.—Տեղեկութիւններ են ստացվել, որ ըստ երևոյթին բէլուջները, կաշառված գերմանական գործակալների ոսկուց, փչացրել են հեռագիրը հարաւ-արևելքում։

Այս շաբաթվայ ընթացքում չեն ստացվում Ռէյտէրի գործակալութեան պատերազմական բիւլլետէնները։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Երէկ երեկոյեան կայացաւ բազմամարդ միտինգ բողոքելու համար պատերազմի կողմնակիցների դէմ։ Միտինգին մասնակցում էին մօտ 5000 մարդ։ Արտասանեցին ճառեր շատերը, ի թիւս որոց քաղաքագլուխը։

Ընդունվեց միաձայն մի բանաձև, որի մէջ ամենից առաջ մատնանշված է Բէլգիայի վիճակի վրա, որ նախազգուշական օրինակ է ծառայում մանր չէզոք պետութիւնների համար. յետոյ խիստ դարձուածքներով պարսավում է ակտիվ հանդէս գալու պահանջը, որ բանաձևի մէջ անուանված է թեթևամիտ-ագրեսիվ։ Ժողովը առաջին հերթին է մղում այն հանգամանքը, որ անցեալ տարվանից ոչինչ այնպիսի բան չէ պատահել, որպիսին կարող լինի փոխել սկանդինաւեան պետութիւնների բռնած չէզոքութեան դիրքը։ «Բանւորները,—ասված է բանաձևի մէջ,—պէտք է ամեն կերպ մաքառեն ագրեսիվ տենդէնցների դէմ մինչև ծայր աստիճանը, պաշտպանելով խաղաղութեան գործը և ակտիվ խաղաղ քաղաքականութիւնը»։

Երկրորդ միտինգը նշանակված է յուլիսի 3-ին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՋՈՒՐ ԵՒ ԱՆԺԱՄԱՆԱԿ ԱՂՄՈՒԿ

Եթէ մեզանից 30—40 տարի յետոյ մէկն ուզենայ գաղափար կազմել վերջին 10 տարվայ մեր հասարակական կեանքի մասին և այդ նպատակով ուսումնասիրի մեր պարբերական մամուլը, նա անշուշտ շատ սխալ եզրակացութեան կը գայ, ընդունելով մամուլի մէջ յարուցված աղմուկները զանազան հարցերի շուրջը որպէս լուրջ ու դրական գործ։

Ցիրաւի, վերջին 10-ամեակի ընթացքում մենք քանի-քանի հասարակօգուտ հիմնարկութիւնների ծրագիրներ ենք յղացել, որքան ժողովներ ու համագումարներ ենք գումարել, անվերջ վիճաբանել, և այդ բոլորը ի հարկէ արձանագրվել է մամուլի էջերում. բայց ինչ հետևանք է ստացվել այդ բոլորից... Համարեա ոչինչ, բացի ջուր և անտեղի աղմուկից, որ կարող է միայն մոլորեցնել հայ կեանքը ուսումնասիրող ապագայ պատմաբանին։

Օրինակ, ինչ հետևանք ունեցան մեր տաք-տաք վիճաբանութիւնները, բանակռիւները «Խրիմեանի ֆոնդի» և Վարագայ ուսումնարանի մասին, կամ այժմ շատե՞րն են յիշում արդեօք «Իզմիրլեանի ֆոնդի» մասին։

Ո՞ւր մնացին մեր միւս «ֆոնդերը»՝ ուսումնարանական, ուսուցչական, դրամատիկական և այլն։ Գոյութիւն ունի՞ արդեօք այն համեստ ծխական դպրոցը, որ պէտք է հիմնվէր ի յիշատակ մեր վաստակաւոր և անձնուէր գործիչ Ս. Զաւարեանի՝ նրա ծննդավայրում։

Դեռ երէկ էր, որ մենք ջերմ բանակռիւ էինք մղում այն հարցի մասին, թէ Ս. Զաւարեանի յիշատակին հիմնվելիք ուսումնարանը ի՛նչ տիպի պիտի լինի՝ ծխական թէ գիւղատնտեսական, և ո՛րտեղ պիտի լինի նա՝ Ս. Զաւարեանի հայրենի գիւղում թէ Թիւրքահայաստանում։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԻՒՆԱԹԱԹԱԽ ԱՒԵՐԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ

(Սեփ. թղթակցից)

Ալաշկերտ, 24 յունիս

Այժմ, երբ ռուս բանակը յառաջացած է մինչև Խնուսի սարերը, այն տեղերէն եկած հրանօթին խուլ որոտումները այլ ևս չեն ահաբեկեր Ալաշկերտ վերադարձող հայերը։ Թնդանօթը օր-աւուր պիտի մաքրագործէ Բիւրակնի ծործորները ասքէրներէն ու քիւրդերէն։ Ամեն ոք սկսած է հաստատուիլ այդ համոզման մէջ։

Եւ մենք կը փորձենք ընդհանուր պտոյտ մը կատարել պատերազմին պահ մը առաջ՝ թատրը հանդիսացող մեր ցաւատանջ Բագրևանդի հովիտներուն մէջ։

Ահա Կարաքիլիսէի և Ալաշկերտի դիակայած դաշտերը, ուր բնակող քիւրդը գործած է՝ իր վայրենութեան բոլոր թափովը՝ աւերումներ և փախած է՝ ետին թողլով իր և իր հարևան հայոցն գիւղերը ծուխի ու մոխիրի մէջ։

Դաշտին լայնածաւալ տարածութիւնը բռնած է ճոխ խոտը։ Ամենուրեք՝ ճամբաներն իսկ՝ անկոխ ու խոտաւէտ մարգեր դարձած են։ Կանաչին մէջ՝ հեռուէն դիտողին տեսանելի կըլլան գորշ կիսակիտումներ, որոնք գիւղերու փլատակներն են։ Ծուխ կամ կենդանութեան մէկ նշան դուրս չէր գար անոնցմէ։ Առուները՝ Արածանիի յորդահոս ճիւղերը՝ կը վազեն, մռնչաձայն կը լեցնեն ամայութիւնը։ Երկրագործին օգտին չեն ծառայեր անոնք, այլ անսանձ ու աննպատակ կը սուրան։

Մասիսէն մինչև Սուքաւէտ լեռը և դէպի հարաւ՝ շատ հեռուները՝ երկարաձգուած մեծ ճամբուն վրայ կը շարժի անդադար՝ պատերազմին ծառայող անհատնում կարաւանը։ Ուտեստեղէնի և ռազմամթերքի բեռներ կը կուտակուին ու կը մղուին դէպի առաջ շարունակաբար։

Մենք պտոյտնիս կը սկսինք արևմուտքէն, ռազմաբեմերու մօտէն, որ կէտէն անդին անցնիլ չի թոյլատրուիր ոչ-պատերազմիկներուս։

Քեօսա-դաղի կողմէն կը հանդիպինք Ալաշկերտի ամենէն անկիւն մնացած՝ ամենադժբաղդ երկու հայ գիւղերուն՝ Մոլլա-Սուլէյմանին և Ջէդիգանին։ Այս երկու գիւղերուն իւրաքանչիւրէն 20—80 առոյգ երիտասարդներ հազիւ կարողացած են կոտորածէն պրծիլ. մօտ 300 տնւոր՝ երկու գիւղին այր մարդիկն են ատոնք, որոնք վերադարձած են իրենց փլատակներուն վրայ. մերթ կաշխատին ժրաջանութեամբ, մերթ կը հաւաքուին առուի մը եզերքը կամ փուլ եկած պատի մը տակ և կողբան իրենց կորուսած սիրելիները։

Մեր հանդիպումը այս գիւղերուն մէջ անհուն մխիթարութիւն պատճառեց։ Նախապատմական դարերու անհատներուն պէս՝ զանազան փլատակներու մէջէն դուրս եկան մեր եղբայրները և շրջապատեցին մեզ։

— Ձին թողուցէք որ իր ուզած տեղը երթայ արածի... գող չէ մնացած... գիւղին անցքերուն մէջ գարին ու ցորենը առատութեամբ բուսած են... կենդանին թող ուտէ զանոնք,—ըսին, ու նստանք միասին։

Բղձկեցան սրտերը. կուլային ոմանք աղիողորմ. ուրիշները կը պատմէին անվերջ՝ գլխնուն եկածները։ Կին-մարդ չկար։ Սըրտերնին պնդացած ատենին կաշխատէին, կեփէին, կը թխէին. ուրիշ ատեն կընկողմանին՝ սպասելով լաւ օրերու վերադարձին... Պատմեցին նաև՝ գարնան ատեն թշնամիին տուած գրոհը և երկու գիւղին միջև ասքէրներուն կրած չարաչար պարտութիւնը։ Այս վերջիններուն դիակները թաղելու զբաղած էին մեր գեղջուկները նաև։

Մոլլա-Սուլէյմանէն և Ջէդիգանէն տարուած 120-ի չափ կիներէն և աղջիկներէն միայն երկու հատ յաջողած են փախչիլ գալ։ Ջէդիգանը Մոլլա-Սուլէյմանէն աւելի ճանապարհի վրայ և ռազմաբեմին աւելի մերձ ըլլալով, տեղւոյն եղած բնակչութիւնը շատ նեղութեան մէջն է. նոյն նեղութեան մէջ են Խոլեանի, Զլգանիի և Կարաքիլիսէի այր մարդերը, որոնք որ վերադարձած են Ռուսաստանէն։

Վերոյիշեալ երկու գիւղերէն յետոյ, անցնելով պատերազմէն դուրս եղած վայրերու վրայէն, փռուած կը տեսնէինք դեռ հատած դիակներու և ռազմազինուց թափերու ցրցքումները զմայլելի, ցօղապատ բուրաստաններու մէջ։ Կը գիշերենք (14 յունիս) Ջէդիգան և առաւօտուն կը մեկնինք դէպի Կլիջ-գէդիկի սարերը՝ Խաստուր։

Տակաւ կը հեռանանք արևմտեան բանակատեղիի վրաններէն, որոնք իրենց մօտիկ ձեան կոյտերուն հետ միասին համապարփակ կանաչութեան մէջ հեռուէն սիրուն հակապատկեր մը կը կազմեն։ Շէխանի լեռներուն պարին ստորոտն է այս, ուրտեղ ռուս բանակին տարած յաղթանակները փառաւորապէս պիտի արձանագրէ պատմութիւնն անտարակոյս։ Ալաշկերտի շրջանին բոլոր փախստական իսլամութիւնը՝ առնելով իր հետ հայ կիներն ու թալանները՝ նոյն կէտէն փախուստ գործած է դէպի Խնուս կամ Բիթլիս։

Խաստուրի մեր արիասիրտ եղբայրներէն շատերը յունվարին վերադարձած են իրենց գիւղը, որ այնքան արհաւրոտ վայր մըն է (Դուտախէն 3 ժամ հեռու), և սկսած են յանդգնօրէն իրենց օջախները վերականգնելու աշխատիլ։

Ամեն տեղւոյն պէս այս տեղ ալ 1—2 կին պառաւներ մինակ կային. միւսները ճարպիկ քաջասիրտ երիտասարդներ էին, որոնք կը ցաւէին, որ իրենց գիւղակիցներէն ոմանք ետ մնացած են և չեն օգտուած կանուխ գալու առիթէն։ Այս վերջիններուն պէս ամեն գիւղ ունի իր անճարակները, հիւանդներն ու այրիները, որոնք անպատսպար և սոված վիճակով տուն պիտի վերադառնան։

Խաստուրը հինէն ի վեր նշանաւոր է իբրև հայ յեղափոխականներու չուէկան ու ապաստանարանը, որուն հետևանքով օսմ. կառավարութեան կողմէ միշտ հալածուած ու քանդուած է այս գիւղը։ Այս ալ քանիերորդ անգամն քանդումն է, որ կը տեսնեն նոր խաստուրցիները։ Ես տեսայ, որ անոնք անվեհերութեամբ՝ անկատար գործիքներով, կը պեղէին նորէն հողը, տուն կը շինէին։ Վեր կը բարձրացնէին (խօսակցած ատեն) իրենց քրտնաթոր բռունցքը դէպի Բինգէօլ, դէպի թշնամիին բանակը, որմէ չէին կրցած կատարելապէս վրէժնին յագցնելու։

Ներքնապէս բղձկելով այդ եռանդին ի տես, սրտիս մէջ կըսեմ. «Փառք ձե՛զ, անվեհեր գեղջուկներ, որ երկրագունդն ալ կոնակնուդ դնեն՝ տանելու կը ճգնիք...»։

Կանցնինք Զլգանիէն, Եխինթափայէն և ուրիշ հայ գիւղերէ, որոնք ամենն ալ ընտանիքնին կովկասեան իրենց եղբայրներուն յանձնած՝ վերադարձած էին տուներնին շինելու։ Գիւղերու շուրջը հազիւ քանի մը հատ կենդանիներ կը նշմարուէին, ատոնք ալ մեծ մասամբ վտիտ ու մանր էին։

Ոչ ոք ալ կարծես ցանքի, հունձքի վրայ բնաւ չէր մտածեր. ամենուն պահանջն է «տուն, տուն, տուն...»։ «Նախ տնակ, վերջը գերեզմնակ»—կըսէին անոնք, ու ես տեսայ, որ միահամուռ, զօրաւոր փափագ մը կայ ամենէն առաջ մէկ-մէկ պատսպարան ունենալ. որքան երջանիկ կը համարուէին ոմանք, որոնց հիւղակները շատ քանդուած չէին։

Ամեն իջևանած տեղերնիս ճերմակ լաւաշ հաց կը հրամցնէին մեզ—ատիկա առ այժմ այս կողմերու միակ առատ սնունդն է—և ոչ ուրիշ ուտելիք, որովհետև հազուադէպօրէն կով կամ ոչխար ունեցողի կը պատահիս, եղածներն ալ Ռուսաստանէն նոր պիտի բերէին իրենց ընտանեաց հետ միասին։

Կը պանծային մեր գեղջուկները, որ լաւաշը իրենք (այր մարդիկ) շաղած թխած էին։ Ամենուն համեստօրէն քաջալերանքնիս չէինք զլանար և կը դիտէինք, որ աշխատէին ժամանակաւոր իրենց բնակակից զինուորներուն կամ կոզակներուն եղբայրական գուրգուրանքները վայելելու աշխատիլ։ Մխիթարական է, որ մերիններէն շատերը այնքան կարճ ժամանակուայ մէջ սկսած են ռուսերէն բառերով քիչ շատ արտայայտուիլ գիտնալ։ Այդ պարագան կը տեսնէի որ կոզակներուն խիստ հաճելի էր, որոնք կը ջանային խօսակցած ատեննին՝ մերիններուն սխալ արտասանութիւնը շտկել, և մերթ չարաճճիօրէն զիրար կատակելով փոխադարձ ժամանցներ կը սարքէին։

Կը թելադրէինք նաև, որ տակաւ իրենց սեփական աշխատութիւններովը օգտուելու ձգտէին մեր գեղջուկները, քան թէ ազգային նպաստներուն սպասելով ժամանակ կորանցնէին։

Կը հանդիպինք Թօփրակ-Կալէ (Ալաշկերտ), որ այս շրջանին երկրորդ կեդրոնն էր (Կարաքիլիսէն առաջինը համարելով)։ Քանդ ու աւեր վիճակի մէջն է այս թիւրքաշատ քաղաքը, որուն իսլամ բնակչութենէն քանի մը ծերեր և երախաներ միայն կերևէին աւերակներու կոյտերուն մէջ, իսկ վերադարձող կամ կոտորածէն խուսափող այր մարդիկը՝ Համզգան անուն քիւրդ գիւղէն նոր փոխադրուած էին այստեղ։

Հայ-շտաբին գլխաւոր ճիւղը Կարաքիլիսէ է, և երկրորդը այստեղ, որոնք կը միջնորդէին հայերուն դէպի Ռուսաստանը երթևեկելուն մասին կառավարութեան մօտ, վկայագրեր կը գրեն՝ զինուորական իշխանութենէն վաւերացնելու համար։

Թօփրակ-Կալէն՝ ամբողջ այս շրջաններուն՝ վաղեմի հայոց ուսումնական կեդրոնն եղած է, շնորհիւ Հայոց Միացեալ Ընկերութեան այստեղ պահած մշտատև բարձրագոյն նախակրթարանին։ Վերջերս յիշեալ լուսասփիւռ Ընկերութեան շրջանային կեդրոնը փոխադրուած էր Կարաքիլիսէ, սակայն այստեղ նմանապէս դպրոցն իր յաջող գործովը կը շարունակուէր։ «Միացեալ Ընկերութիւն» և «Ալաշկերտի կրթական գործ» անունները համանիշ եղած են այնքան, որ նոյն կէսդարեան Ընկերութիւնը պատկառազդու հեղինակութիւն ունէր ոչ միայն այստեղ, այլ ամբողջ Թիւրքիայի մէջ։

Ընկերութիւնը այս շրջանին մէջ դպրոցներ ունէր նաև՝ Խաստուր և Խաչլու գիւղերուն մէջ։ Շրջանակին բոլոր կարդալ գրել գիտցողները, պաշտօնեաները, քահանաները և յեղափոխականները, շատ աննշան բացառութեամբ, ամենն ալ Միացեալ Ընկերութեան սաներն են։ Թօփրակ-Կալէի երկսեռ վարժարաններուն այժմու խղճալի վիճակը կարթնցնէ մեր մէջ վերոգրեալ անմոռանալի յիշատակները...

Այստեղ կոտորուած են (դեկտեմբերին) Մոլլա-Սուլէյմանին և Ջէդիգանին ժողովրդեան մեծ մասը։

Թօփրակ-Կալէի մօտ Խաչլու և ապա Ամատ, Աշ-Կալէ և այլն հայաբնակ գիւղերը կը հանդիպինք։

Ամենն ալ նոյն քանդ ու աւեր դրութեան

Խօսեցինք, վիճեցինք, աղմուկ հանեցինք և... մոռացանք։

Այժմ բոլորովին նոյն եղանակով վճռում ենք այն հարցը, թէ որտեղ պիտի լինի Շամախու ապագայ թեմական դպրոցը՝ Բագւում թէ Շամախում։

Այդ աւելի քան վաղեմի հարցը վճռելու համար ծխական ժողովներ են գումարվել, ընտրվել են պատգամաւորներ, որոնք ճանապարհորդութիւն են կատարել Շամախի, շամախեցիները բողոք են ներկայացրել և «հայրենասիրական» ցոյցեր արել թեմ. ժողովում, և այդ բոլորը արձանագրվել է մամուլի էջերում ի մոլորութիւն ապագայ միամիտ բանասէրի...

Կարճ ժամանակում Շամախու թեմական դպրոցի «տեղի» մասին այնքան յօդուածներ տպվեցին, որ Լէօյի «Մէլիքի աղջիկը» նսեմացաւ ու մոռացվեց...

Եթէ յաճախ հասարակական հարցեր յարուցանելը սպորտի բնաւորութիւն չունենար, այլ լինէր արդիւնք լուրջ վերաբերմունքի և մտածողութեան, այն ժամանակ նախ և առաջ մի շարք անաղմուկ խորհրդակցութիւններ պիտի լինէին ապագայ թեմ. դպրոցի նիւթական ապահովման մասին։ Յոյս դնել նրա վրա, թէ «Բագւի հարուստները հարկաւոր դրամը կը տան», դա, թող ներվի մեզ ասել, լուրջ վերաբերմունք չէ դէպի գործը։

Չը պէտք է մոռանալ, որ մեր թեմական դպրոցները հայաշատ կենտրոններում ողորմելի դրութեան մէջ են գտնվում տասնեակ տարիներ շարունակ։ Որպէսզի հիմնվելիք թեմ. դպրոցը գէթ չնչին չափով գոհացում տայ այն պահանջներին, որ արտայայտվել են ծխական ժողովում, նա չը պիտի նմանի մեր միւս թեմ. դպրոցներին, ուր մտնում են սովորելու միայն անճարները և ուր ուսուցիչները ամիսներով ռոճիկ չեն ստանում։

Վատ չէր լինի, որ մենք միշտ յիշէինք «Աբովեանի արձանի» պատմութիւնը և այսօր այնպէս չը տանենք գործը, որ Շամախու թեմ. դպրոցը դառնայ մի երկրորդ «Աբովեանի արձան»... Այդ տեսակէտից՝ մի գործ սկսելուց առաջ մեր ամենամեծ հոգացողութեան առարկան պիտի լինի նախ նիւթական միջոցների հարցը։

Եթէ գործը այդ ծայրից սկսված լինէր, այն ժամանակ ամենքի համար պարզ կը լինէր, որ թեմական դպրոց հիմնելու և ապահովելու համար հարկաւոր կը լինի մօտ կէս միլիօն րուբլի...

Բայց կարելի կը լինի արդեօք այժմ և սրանից մի քանի տարի յետոյ ժողովել այդպիսի մի գումար։

Վերջապէս ժամանա՞կ է արդեօք թոյլ տալ, որ մեր բարոյական ու նիւթական ոյժերի մի խոշոր մասը շեղվի այն էական նպատակներից ու խնդիրներից, որ ներկայ պատմական պայմանները դնում են մեր առաջ և որոնց բարեյաջող լուծումը կախված կը լինի մեր բարոյական ու նիւթական ոյժերի լարման աստիճանից... Ի՞նչ ժամանակ է այժմ մտածելու նոր թեմ. դպրոց հիմնել, երբ հայ ցեղը Թիւրքաց Հայաստանում բնաջինջ լինելու վտանգի առաջ է կանգնած...

Մեր ընթացիկ բոլոր ազգային ու հասարակական կարիքները հոգացվում են գլխաւորապէս միևնոյն աղբիւրից՝ ժողովարարութիւնից։ Կատարելով այսօր ժողովարարութիւն Շամախու թեմ. դպրոցի համար, մենք անհրաժեշտօրէն պիտի զրկենք որոշ չափով նիւթական օժանդակութիւնից մեր այն գործերն ու ձեռնարկութիւնները, որոնց կարևորագոյն լինելը ներկայ պայմաններում պէտք է բարձր համարել ամեն կասկածից ու վէճից։

Մեր առաջը դրված է այսօր կամաւորների և փախստական-գաղթականների հարցը։ Մեր բոլոր ոյժերը պիտի լարենք այժմ բազմացնելու մեր կամաւորների թիւը և օգնելու մի քանի տասնեակ հազար փախստականներին և աղքատներին, մինչև որ նրանց համար կը ստեղծվեն նորմալ կեանքի պայմաններ։ Իսկ Շամախու թեմ. դպրոցը կարող է մի երկու տարի էլ սպասել, ինչպէս սպասել է տասնեակ տարիներ։

Կան հարցեր, որոնք սերտ կերպով կապված են մեր ցեղի գոյութեան և նրա կուլտուրական բարգաւաճման հետ, ինչպէս օրինակ ներկայումս կամաւորութեան և գաղթականութեան հարցը։ Այդ հարցերի առաջ ներկայ պատմական մոմենտում պիտի տեղի տան մնացած բոլոր հարցերը, մինչև որ մեր շուրջը ծփացող ծովը խաղաղվի և տասնեակ հազարաւոր որբերի ու այրիների արտասուքը սրբվի ու նրանց սրտի կսկիծը ամոքվի...

Սխալ ճամբի վրա է կանգնած այն գործիչը, ով այս պարզ ճշմարտութիւնը չի ըմբռնում այժմ և ջլատում է մտցնում մեր՝ դժբաղդաբար չափից դուրս սահմանափակ ոյժերի մէջ...

Մեր նիւթական խնդիրներից շատերը կարող ենք աջողութեամբ վճռել 2—3 տարի յետոյ, բայց եթէ այսօր չը բազմացնենք ու չը խտացնենք մեր կամաւորների շարքերը և չազատենք սովից և կոտորածից հազարաւոր հայ դժբաղդներին, անգամ կէս տարի յետոյ այլևս ուշ կը լինի...

Պեատիգորսկ. Ե. Թաղիադեան

ԳԱՒԱՌԸ ԵՒ ԹԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Մինչ քաղաքների գիտակից քաղաքացիութիւնը, իրանց սրտացաւ ու պարտաճանաչ խորհրդի անդամներով, մտածում, միջոցներ են ձեռք առնում թանգութեան դէմ, կռւում, մաքառում՝ վաճառականների ագահութիւնը չափաւորելու, քաղաքի ազգաբնակչութեանը ազատելու նրանց շահագործումից, գիւղը՝ ընդհակառակը՝ լուռ է։ Նրա ցաւերի մասին ձայն, ծպտուն անգամ չը կայ, և միամիտ մարդիկ կը կարծեն, որ գիւղերը դրախտ են, գիւղում «գայլը գառան հետ միասին է արածում»։ Քաղաքացին կը կարծի, գիւղացիք, ներկայ մոմենտում, լաւ վիճակում են քան իրանք։

Այդպէս կարծողները չարաչար կը սխալվեն։ Երբ քաղաքներում տիրում է թանգութիւն, գիւղի բանը պրծած պիտի համարել։ Գիւղացին, որ սովոր է ամեն մի խելքը չը հասած բանը վերագրել բնութեան, Աստուծոյ, ներկայ համաշխարհային պատերազմի հետևանքով ստեղծված թանգութիւնն էլ այսօր համարում է Աստուծոյ տնօրինած պատիժ, առանց ինքն իրան հաշիւ տալու, թէ իր ո՞ր մեղքերի համար։ Նա տեսնում է, որ երէկվայ իրան համահաւասար համագիւղացին, մի որևէ միջոցով մի կրպակ բաց անելով մի քանի ամսում, մի քանի տարիներում իր համար հանգիստ ու բարեկեցիկ կեանք է ստեղծել։ Այնուհետև մեր միամիտ գիւղացին այլ ևս ընդունում է իր այդ չարչի-վաճառականի առաւելութիւնը, նրա մեծութիւնը և ամենակարողութիւնը։ Նա հաւատացած է, որ նրա ճակատագիրը, նրա բաղդը այդպէս է եղել տնօրինված։ Գիւղացին այնքան ծոյլ է մտածելում և դատելում, որ մտքովն էլ չի անց կացնում, թէ ախար երէկվայ իր համահաւասար և շատ բաներով նոյնիսկ իրանից ցածր վաճառականը ինչո՞վ, ինչ միջոցներով հասաւ այդ բաղդին։ Գիւղացին չի կարողանում ըմբռնել, որ այդ բոլորն իր տուած յաւելեալներով է ստեղծվել։ Նա իր բաց աչքերով տեսնում է, որ խանութպանը 10—30 վերստ հեռաւորութեան վրա գտնվող շուկայից է գնում շատ ապրանք, 7—8-րդ ձեռքից, յաճախ նոյնիսկ իր քթի առաջ կշռի տակից և մտցնելով իր կրպակը —քաւութեան աւազանը—20, 30%-ով «քաշում իրա՝ մուշտարու ջանին»։

Աւաններն ու մեծ գիւղերը շատ հեշտ կարող կը լինէին մաքառել թանգութեան դէմ, եթէ խելացիութիւն ունենային կազմակերպվել. բայց ամենամեծ ցաւը հէնց այն է, որ մեզանում հասարակական ոյժով գործ ստեղծելու, միահամուռ ջանքերով գործելու տրամադրութիւն չը կայ, և մենք այդպիսի բարեխղճութիւնից զուրկ ժողովուրդ ենք։

Գիւղացին ամեն բան վերևից է սպասում։ Նա միշտ էլ հրամանի ներքոյ է առաջ գնացել։ Նա զուրկ է ինքնուրոյնութիւնից։ Եւ քանի որ այդպէս է, չէ կարելի նրան թողնել բաղդի կամքին. պէտք է չը թողնել, որ նա այդպէս շահագործվի. Նրան օգնել է հարկաւոր։

Գիւղի—գիւղերի հոգատարութիւնը մեծ մասամբ ընկնում է ոստիկանութեան և գիւղական պաշտօնակատարների վրա, որոնց պարտականութիւնն է և կարող կը լինէին որոշ չափով արգելել վաճառականների վրա և թանգութեան առաջն առնել մասամբ, եթէ նրանք էլ գիտակցելով նուիրվէին այդ գործին։ Եւ մեր ամենամեծ ցաւերից մէկն էլ դա է, որ, քիչ բացառութեամբ, այդպիսի անձնուէր ու պարտաճանաչ պաշտօնեաներ չունենք։ Գիւղերում գոնէ տեղական մթերքի վերաբերմամբ շատ հեշտ կարելի է սակագին պահպանել, բայց դա էլ չը կայ, և ամեն բան «կրպակի գին է» դառել։ Մենք ապրում ենք ապագայ սովի չափ թանգութեան նախօրեակում, եթէ այժմեանից միջոցներ ձեռք չառնենք։

Մեղրիում կարգ է՝ որ կշռի տակ ծախսւած ապրանքը մի օր մնայ, գիւղացիք առնեն, իսկ երկրորդ օրը կարող են գնել և խանութպանները, և ամեն մի կշռի տակ եղած ապրանք նախօրէն գնահատվում էր տանուտէրի, օգնականի կամ մի ներկայացուցչի միջոցով. բայց ներկայումս այդ կարգը բոլորովին անտես է առնված։ Ամեն ապրանք ու մթերք կշռի տակ հասնելուն պէս՝ խանութպաններից ով ճարպիկ է, նա է առնում և դնում իր կրպակը։ Գտնվում են խանութպաններ, որ մթերք, ապրանք բերողի հետ նախօրէն պայմանաւորվելով՝ ապրանքատէրը թանգ է գնահատում իր ապրանքը, որ ոչ ոք չը վերցնի։ Յետոյ խանութպանը ինքն է վերցնում և իր ուզած գնով ծախում, այնպէս որ գիւղացին ստիպված է էլի խանութպանից առնել, քանի որ կշռի տակ բերողը աւելի թանգ կամ նոյն գինն է ասում։ Եւ եթէ մեզ մօտ այդպէս է, նոյն դրութեան մէջն է և միւս տեղերը։

Այս նորօրինակ կարգի դէմ պիտի մաքառեն նրանք, որոնք պարտականութիւն ունեն։

Մեղրի Ե. Վ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Հեղեղներից յետոյ

Շոշ գիւղ, 23 յունիսի

Երկարատև հեղեղներից յետոյ ահա չորրորդ օրն է, որ արևային օրեր են լինում։ Հողմ ու անձրևների անընդհատ հարուածներից տափակած, գետնին հաւասարված արտերը սպիտակել են և արդէն հնձվում են։ Բերքը ի հարկէ չափից դուրս պակաս է լինելու, որովհետև արտերի մի մասը հեղեղատար է եղած, իսկ մնացածի էլ հասկերը վատ են և պտուղը նուազ։ Եւ եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ ցորենի թաղարը (9—10 պուդ) այժմ վաճառվում է այս կողմերում 25 րուբլով, պէտք է գանք այն ցաւալի եզրակացութեան, որ առաջիկայ բերքատարին աւելի վատթար է լինելու և սովն էլ անխուսափելի։ Շատ լաւ կը լինէր, որ Գիւղատնտեսական Ընկերութիւնը անբերրիութեան ենթարկված և ենթարկվող գիւղերի ցուցակը և կարիքի չափը իր ներկայացուցիչների միջոցով պարզէր, որպէս զի կարիք եղած դէպքում հնարաւորութիւն ունենար պատրաստի ցուցակի համաձայն փոխառութեան միջոցով կամ այլ կերպ օգնութեան գալու հոգացողութիւնն իր վրա ընդունել։

Երկարատև հեղեղներից աւերվել են բոլոր հողածածկ տները համարեա, գոմերը և մարագները։

Արդէն բացված է այստեղ փոխատու-խնայողական ընկերութիւն, ընտրված է վարչութիւն և այս քանի օրս սպասվում է 2000 ր. Թիֆլիսից, որից յետոյ կսկսեն գործի։

Աշխատող ձեռքերի բացակայութեան պատճառով՝ գիւղական աշխատանքները իրար են խառնվել. գութանվարը չէ վերջացած, իսկ հունձն արդէն սկսված է։ Գաղթականները թէև աշխատում են, բայց շատ դէպքերում հակառակ իրանց կամքի անզօր են։ Օրինակ՝ նրանք մեր մանգաղով հնձել չեն կարողանում, ուստի և այդ դէպքում շատ քիչ են օգնում գիւղացուն։ Անասունների մէջ տարածված է «դարաղջ» հիւանդութիւնը։

Բ. Մկրտումեան

Գանձակի խռականութիւնից

Գանձակ, 25 յունիսի

Ինչպէս յայտնի է, հանգուցեալ Սողոմոն Առաքելեանն իր ունեցած 8 խանութները և մի քանի հազարի հասնող մուրհակները կտակել է ս. Յովհաննէս եկեղեցուն՝ ծխ. դպրոցի համար շէնք կառուցանելու՝ և նշանակել է կտակակատարներ։ Այս հարցի մասին անթիւ խորհրդակցական, ծխ. և շատ այլ ժողովներ տեղի ունեցան, վճռելու համար թէ արդեօք ո՞վ պիտի կառուցանէ յիշեալ դպրոցի շէնքը. կտակակատարնե՞րը՝ որոնց ձեռքին է գտնվում կայքը, թէ եկեղ. հոգաբարձուները՝ որոնք ուզում են կտակակատարների ձեռքից խլել կայքը, բայց նրանք, ի հարկէ, յօժար կամքով չեն տալիս. կարծես թէ ժողովրդի ու եկեղեցու համար ողջ մէկ չէ, թէ ո՞վ պէտք է այդ բանը անէ։ Կտակակատարները ասում են. «Ինչո՞ւ մենք չը պիտի շինենք, այլ նրանք»։ Իսկ հոգաբարձուները թէ՝ «ինչո՞ւ նրանք, այլ ոչ մենք»։ Եւ, ինչպէս երևում է, այս «խմորը ջուր շատ է վերցնելու», որովհետև յիշեալ կտակի արձագանքներն արդէն լսվում են դատարաններում, ուր դիմել են կտակակատարները հոգաբարձուներից մէկին մեղադրելով հասցրած վիրաւորանքի մէջ, և դիմում են հոգաբարձուներին՝ պահանջելով կտակված կայքը։

Բայց չը կայ չարիք առանց բարիքի. մինչև դատարանում գործը կը վերջանայ, կանցնեն մի քանի տարիներ, թողած խանութների եկամուտները կը շատանան ու դպրոցի համար լաւ շէնք կարելի է կառուցանել։ Բայց և այնպէս ուշադրութեան արժանի է մեր հարուստների բոյկոտը կտակ չանելու մասին։ Առաջին օրինակը տուեց ամսիս 22-ին վախճանված Ս. Ի. Մալիեանցը, ծերունի, անզաւակ մարդ, որը թողել է կնոջը իր բոլոր հարստութիւնը՝ մօտ 100,000 ր.։ Հանգուցեալը իր աղքատ ազգականներին ոչ մի բան չէ տուել, ուզենալով պահպանել խիստ հետևողականութիւն, որովհետև նրանց իր կենդանի ժամանակ էլ չի օգնած երբէք։

Ս. Յովհաննէս եկեղեցուն պատկանող մի մեծ շինութիւն է կառուցվում. չար բաղդի տակ է այն սկսվել ու շարունակվում է. նրա օրօք մի հոգաբարձու յանկարծամահ եղաւ, միւսը երիտասարդ հասակում մեռաւ, երրորդը ծանր հիւանդացաւ, քիչ մնաց նրանց ետևից հասնէ, չորրորդին մի ուրիշ փորձանք պատահեց։ Շինութիւնը կառուցանելու համար փող չէ գտնվում. գանձակցիք եկեղեցուն փող չեն վստահանում տալ։ Եւ եկեղեցին տուժում է, կորցնելով մօտ 7 տարի տարեկան 4—5 հազար ր.։

Կիրակի, յունիսի 14-ին, ծխ. ժողով էր. այստեղ վճռվեց՝ ծխ. դպրոցի շինութեան համար հաւաքած 8000 ր., որը ընկած է բանկում (հնարաւորութիւն չը կայ առ այժմ ուսումնարանի շէնք կառուցանել), յատկացնել փոխարինաբար, 8%-ով, նորակառոյց խանութների շինութեան վերջանալուն, այն պայմանով, որ այս պարտքը լըրացվի երկու տարւայ ժամանակամիջոցում։

Համակրելի պէտք է համարել միանգամայն ժողովի այս վճիռը։

Յովս. Խօջայեան

Լուրեր Արդուինից

Արդուին, 28 յունիսի

◆ Բծաւոր տիֆը գնալով սաստկանում է.

◆ Յուլիսի 6-ին վարձու են տալու փու-

մէջ։ Ամեն տեղ որ կը մտնենք, աշխատաւորները կը թողուն փորել-շինելու գործերնին և կուգան շուրջերնիս կը հարցնեն միաբերան.

— Ա՜խ, պարոն, աջաբ մեր քօչերը (ընտանիք) ե՞րբ պիտի գան Ռուսաստանէն... Աս անիծեալ Թիւրքին քէօքը չկտրա՞ւ դեռ, ետքը չեկա՞ւ դեռ ջարդուելով։

Ամատի և Խաչլուի մէջ հիւանդներ շատ կային, ինչպէս Խասաուրի ու Զլգանի մէջ։ Շրջուն բժշկական խումբ մը շատ օգտակար պիտի ըլլար զանոնք դարմանելու գործին մէջ։

Աշ-Կալէէն և Ամատէն տարուած մէկ քանի կիներ ու աղջիկներ վերադարձան այս օրերը Մանազկերտէն շատ խղճալի և հիւանդկախ կացութեան մէջ։ Նշանուած երիտասարդներ կան, որ չեն ուզեր իրենց նշանածին տէր դառնալ՝ երբ դեկտեմբերին մինակ իրենք զիրենք մտածելով Ռուսաստան փախած էին...։

Աշ-Կալէի և Կարաքիլիսէի միջև կայ Երանոս անուն հայաբնակ կարևորագոյն գիւղը, որ ամբողջ շրջանին մէջ միակ անվնաս ազատուած գիւղն է՝ շնորհիւ նոյն գիւղի պետին՝ Մէհմէդ էֆենդիի և իր ազգականներուն։ Դեկտեմբերին մեր փախուստի պահուն՝ Թիւրք բանակին հետ, իբրև համիդիէ հարիւրապետ, Մէհմէդ էֆենդին կը հասնի իր գիւղը Երանոս և կազատէ մէջի բոլոր հայութիւնը կոտորածէ և թալանէ։ Մէհմէդ էֆենդին նոյն պահուն կը հիւրընկալէ իր տունը (Երանոս) Մուշի Մուսա-բէյը, Բիթլիսի նշանաւոր չէյխը, և Սերգանի պետ՝ Աբդիւլ-Մէջիդը։ Այս պետերուն հետ միացած՝ Մէհմէդ էֆենդին կազատէ Երանոսը մինչև 15 օր, օրմէ վերջ ռուս բանակը կը վերադառնայ։ Երբ իրենք՝ քիւրդ երևելիները ճաշասեղանին կը պատրաստուէին, ռուս թնդանօթը կը գոռայ Կարաքիլիսէի վրայէն. խուճապը լեղապատառ կը թողուն սեղանը և հազիւ ձի հեծնելով մազապուր կը փախչին կազատին։

Այսպիսով կազատի նաև Երանոսի հայութիւնը. հայերն այստեղ իրենց հարևան քիւրդերը փոխադարձ պաշտպանելով այժմ խաղաղ կապրին։

Այցելեցի Երանոսի այժմու պետ՝ Սայիդ աղային (Մէհմէդ էֆենդիի եղբօրորդին), որ նոյն օրը հիւրընկալած էր Ալա-դաղի ապստամբութեան անունով ամբաստանուած չորս գիւղապետները, զանոնք տանելու ռուս զինուորական իշխանութեան անձնատուր ընելու և թիւրիմացութիւնը պարզելու նպատակաւ։

Խօսքս Սայիդ աղային ուղղելով՝ կըսեմ.

— Երանոսի հայերը խիստ գոհ մնացած են ձեզնէ, որ կոտորածէն ազատած էք զիրենք. երանի թէ ձեր օրինակին հետևէին Ալաշկերտի միւս աղաներն ալ։

— Ոչինչ,—կը պատասխանէ Սայիդը,—պարտականութիւննիս կատարած ենք փոխադարձօրէն։ Իրաւ որ, պարոն, առաջները Համիդի ժամանակին ես հայերուն շատ թշնամի էի. յեղափոխականները այս գիւղէն անցած ատեն բռնել կուտայի, իմ գիւղակիցներս կը չարչարէի. բայց սահմանադրութիւն ըլլալէն ի վեր՝ ինծի անանկ կուգայ որ Աստուծոյ և մարգարէին կողմէն ինծի մասնաւոր շնորհք տրուեցաւ, որ սիրեմ իմ դրացի հայերը (դառնալով դէպի հայ գիւղապետները, որ նստած էին մեր կշտին). անանկ չէ, Ակօ, Գաբօ քէհեաներ. («Այո» կը պատասխանեն)։ Այսպէս, վերջերը միշտ հօրեղբօրս հետ հայերը պահպանեցինք և անոնց աղէկութիւն ըրինք. ատով իմ խիղճս շատ հանգիստ է։

— Սայիդ աղա, իրա՞ւ է որ Բիթլիսի չէյխն ու անոնք եկան այստեղ և հայերը (Երանոսցիները) պաշտպանեցին։

— Այո, շնորհիւ հօրեղբօրս տուած [illegible], անոնք ալ մեր գիւղը փրկեցին։

— Հիմա ինչպէս էք հայերուն հետ։

— Հաւատա, պարոն, ի՛նչ ըսեմ. սուտ խօսինք՝ ամօթ է. մեր հարևան հայերն ալ բոլորը լաւ մարդիկ չեն, ագահ են, ագահ, ինչպէս և իսլամ հարևանները։ Այդ երկուքն ալ տուներնին թալանով լեցուցած են, և հիմա կը ցանկան որ (ներքնապէս) իրարու հոգի առնեն, մէկուն յափշտակածը միւսին մնալու համար... Ահա այսպէս՝ [illegible] խելքին համար մենք կուշտ պիտի ուտենք։

Այստեղ տեսայ, որ Սայիդ-աղան կարմբռնելով կը խօսի. Համերաշխ ապրելու օգտակարութեան վրայ մէկ երկու բառ փոխանակելէ յետոյ՝ խօսքս ուղղեցի այնտեղ նստած Ալա-դաղի Գանիրոչ, Մալխաս և Շավերան գիւղերու քիւրդ գիւղապետներուն, թէ՝ իրա՞ւ է որ դեռ ապստամբութիւն կը սնուցանեն իրենց մէջ և այդպիսով պատճառ պիտի դառնան զինուորական իշխանութեան ծայրայեղ պատիժն իրենց վրայ հրաւիրելուն։ Գիւղապետները միաբերան (ինչպէս սովոր են քիւրդերը) և ողորմելի կերպարանքով սկսան մի առ մի խոստովանիլ, թէ, իրաւ, աշունը՝ քանի Հիւսէյն-փաշան իրենց մէջն էր՝ ապստամբութեան մտքեր կը սնուցանէին, բայց մօտ 3 ամիս է, որ փաշային դէպի Բիթլիս փախչելէն յետոյ, երբ Արճէշն ու [illegible] ալ գրաւուեցաւ, ան քիւրդ մտքէն իսկ չէ անցուցած, որ ռուսին պէս բարեխնամ կառավարութեան հնազանդ չըլլայ... «Բոլորը կը զրպարտեն մեզ. մենք պատրաստ ենք ահա երթալ գեներալին ոտքն իյնալու և անկեղծ հպատակութիւննիս յայտնելու»։

Կրկին Սայիդ-աղային կը հարցնեմ.

— Մեր փախչելէն վերջ (ձմեռը)՝ Երզրումի բանակէն այստեղ եկող-գացող եղա՞ւ անշուշտ. արդեօք ինչ կը խօսէին միւս հայկական վիլայէթներու և մասնաւորապէս Երզրումի հայոց մասին։ Ընդհանուր ջա՞րդ պիտի տան հայերուն, թէ չէ։

Այս շահագրգռիչ հարցին վրայ Սայիդը թողուց բարձը, որուն յենած էր, և, ծունկի գալով, յարեց.

— Կրօնքիս և ամուսնութեանս վրայ կերդնում, որ այդ մասին՝ ճշմարիտ իմացածս պիտի ըսեմ։ Ձեր փախչելէն յետոյ, Երզրումէն եկաւ, մասնաւորներու հետ, մեր ազգական Ալի-չաւուշը։ Ան մի առ մի պատմեց հայերուն քաշածները, բայց ըսաւ, որ վերջերս տեղւոյն Թիւրքերը խելացի գտնուած են և կառավարութեան կը մերժեն հարևան հայերը չարչարելու առաջարկը՝ ու հայ և թիւրք ուխտած են մինչև վերջ զիրար պաշտպանել։ Վստահ եղէք, որ, պարոն, լոյս հաւատքիս պէս գիտեմ, որ միւս վիլայէթներու հայերը՝ ինչքերնին պիտի կորսնցնեն. բայց իսլամին կողմէ բնաւ ջարդ պիտի չը կրեն... Է՜հ, ես ինչ գիտեմ. կան տեղեր, ուր էշէքսիզները էշէքսիզութիւն կարելի է ընեն, բայց անոնց ալ սանձը շուտով կը քաշուի։ Ինչու որ՝ այժմ բոլորս ալ հասկցած ենք աշխարհի կանոնաւոր գնացքը. ռուսաց հպատակ ըլլալով, չէ որ մենք աւելի հարուստ կըլլանք, աւելի լաւ ճամբաներ, դըպրոցներ կունենանք... միթէ ռուսն և Անգլիան ուրիշ հպատակ միւսիւլմաններ չունի՞ն, անոնք մեզնէ լաւ չե՞ն ապրիր... Ահա, պարոն, այս մտածումին մէջն ենք հիմակու իսլամներս... ինչու որ՝ Ալաշկերտի փորձը մեզի լաւ դաս եղաւ...։

— Աստուած ձայնդ լսէ, Սայիդ-աղա,—ըսի և մեկնելու պատրաստուեցայ։

Մէկ-երկու շաբաթ ապրեցանք նաև Կարաքիլիսէ և շրջակայ հայ գիւղերուն մէջ։ Եւ ոչ մի տեղ Կարաքիլիսէի, Երիցու գիւղի, Եօնջալըի և Խաչլու գիւղի պէս քանդուած է, որովհետև այս տեղեր թէ ճանապարհի վրայ և թէ ձմեռոց բանակներուն օթեանն եղած են։ Մէշրէ և Խաղու-գիւղ անուն գիւղերու բնակչութիւնը գաղթած է թափուր մնացած քիւրդ գիւղերը, իսկ Եօնջալըն տեղ չգտնելով՝ իր գիւղը շէնցնելու կը չարչրուի։

Մանկասար, Խար, Խումլի, Բուլաղ և Խարաբազար գիւղերը բաւական պատըսպարուելիք տուներ ունին, թէև քանդուած տուներ ալ շատ կան։

Իսկ գալով Ծուճան անուն անկիւնի գիւղին, որ Զէյթունի պէս կոտորածի ենթարկուեցաւ, ողջ մնացածները մեծ մասամբ վերադարձած են և իրենց զբաղմունքները կը շարունակեն։

Կարաքիլիսէի բնակչութեան մեծ մասը վաճառականներ էին. խալաս կորսուեցաւ անոնց դրամական կարողութիւնները. և, այժմ, հողագործ մարդիկ չըլլալով, շատերը մտքերնէն իսկ չեն անցներ, որ Երևանէն վերադառնան դէպ իրենց աւերակներուն վրայ։

Ինչպէս ըսինք, քիւրդ գիւղերը դաշտին մէջ ծայրէ ի ծայր աւերակ կը մնան. միմիայն Ալա-դաղ և Սինակ անուն երկու շղթաներուն վրայ, ուր պատերազմի թատր չէ եղած, քիւրդերը հպատակութիւն յայտնելով հանգիստ կապրին. և ապրած են միշտ։ Հազիւ լեռնամնակ քանի մը տեղեր կան, որ պատերազմին նեղութիւնները քաշած ըլլան։

Հարաւի կողմէն ճամբորդեցի դէպի Սինակ (Բարդողեան սարերը) և տեսայ, թէ ինչպէս կեղծաւոր քիւրդութիւնը ծպտուած է իր քարանձաւներուն մէջ. և ի հարկէն անմե՜ղ, ինքզինք անտէր աշխարամիտ ժողովուրդ մը կը ձևացնէ, ինչ որ իրականին մէջ տարբեր կերպարանք կը ստանայ, երբ օսմանցիներու կողմէն յաջող սուտ ու փուտ լուրեր նոյն իսկ առնէ։ Այսպիսիները կըսեն, որ «Մենք անմեղ էինք, չփախանք իսկ. դաշտին քիւրդերը, որ յանցաւոր էին, փախան»։

Ահա այսպէս Ալաշկերտի դաշտը ըսելով իմանալու է՝ աւերակներու և ամայութեան ընդհանուր համայնապատկեր մը, որուն իւրաքանչիւր քարն ու հողակոյտը արիւնով թաթխուած է, արիւն թշնամիի, արիւն հայ անմեղներու, արիւն ռուս և հայ նահատակներու։ Գիւղ չկայ, որ չունենայ իր դիակներու հորերը, մանաւանդ Թոփրակ-կալէի շրջանը։ Ամբողջ շրջանին մէջ մինակ քանի մը ցանուած արտեր կերևին, իսկ հերկուած բնաւ չկայ. հակառակ մեր թելադրանքին, 1—2 եզ ունեցողը նոյնիսկ աւելորդ կը սեպէր հերկ հանել. «Տուն և ապահովութիւն թող ըլլայ, պարոն, մենք կրնանք կըթին վրայ ալ ցանք հասցնել...» կըսէին։ Ամբողջ շրջանին միակ վաճառանոցը՝ Կարաքիլիսէի մէջ եկւորներու բացած 1—2 կրպակն է, որոնց մէջ օրը օրին կուգան և թանգ գնով կը ծախեն իրեղէններ և ուտելիք, ինչպէս՝ շաքար 40—45 կոպէկ, նաւթ 20 կ., քիւմիւր 20 կ., ֆասուլեա 15—18 կ., բրինձ 20—22 կոպէկ, չիր՝ 26 կոպէկ՝ մէկ ֆունտը, իսկ իւղ և պանիրեղէն՝ լեռնային քիւրդ գիւղերէն կը բերեն կը վաճառեն երբեմն։

Սկսած է գաղթականներու վերադարձը։ Ահա այսպիսի գաւառի մը մէջ, որուն աւերակները դեռ արիւնլուայ են, տեսնենք, արդ վերադարձող ժողովուրդի՝ հոգատար մարմինները ինչպէս և ինչ եղանակով պիտի վերականգնեն նոյն աւերակները։

Գաղթական

խած Թիւրքերի այգիները։

◆ Ժամանակին կանաչեղէն չը ցանելու պատճառով այս տարի գները առասպելական են։ Տեղացի Թիւրքերը, որոնք հողերը թողած փախած են, քաղաքի սահմանում նրանց ունեցած հողերը այս տարվայ բերքից օգտվելու համար բաժանվում են միւսոց տեղացիներին։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղը աշխատում է հիւանդանոց բաց անել, որը գուցէ շուտով բացվի։ Տայեցի

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ՄԵՐ ԳԻՒՂՈՒՄ

Քարվանսարա, 20 յունիսի

Մեր գիւղի «հայրերը» այսպէս որոշեցին. Որովհետև Դաւթեան գիւղատնտեսական դպրոցը քանդուքար արինք ջիգրու, տիեզերքի մէջ խաղք ու խայտառակ լինելով ու գիւղն էլ, գիւղացուն էլ, հազարաւոր տուն հայերին էլ փորհարինք ձգեցինք ու խաւարի մէջ թողեցինք, այդ պատճառով պէտք է գիւղի գոնէ փողոցները լուսաւորենք էլեքտրական լուսով։

Եւ հրաւիրեցին կապալառու X-ին։ Տանուտէրը, հրամանի համաձայն, իսկօյն ժողովի կանչեց ողջ գիւղը. ասեղ ձգելու տեղ չը կար շինական դատարանում. նախագահում էր պրիստաւը. բացակայում էր տեղական ինտելիգենցիան։

Պրիստաւը ժողովը բաց արեց, հասկացնելով ժողովականներին էլեքտրական լուսաւորութեան անհրաժեշտութիւնը, և հրաւիրեց կապալառուին խօսել պայմանների մասին։ Պարոնը մերկ փաստերը դրեց ժողովականների առաջ ասելով.

— Եթէ դուք վերցնէք 200-ից աւելի լամպչկէք, ես կը տամ հատը ամսական մի րուբլով և հիմնարկութիւններին էլ ձրի կը տամ (ոստիկանատուն, դատարան, անտառապետութիւն, պօստային կայարան, գիւղ. վարչութիւն և այլն), իսկ եթէ աւելացնէք 250—300, կը տամ 80 կոպէկով, և այն՝ 30 տարի պայմանով։

Գիւղացիք իրար երեսի նայեցին ու լռեցին։ Էլի Սերգօն լռութիւնը ընդհատեց.

— Շատ ես թանգ ասում, պարոն—ասաց,—էժանացրէք։

— Չէ, աղպէր, ձեռք չի տայ. ինձ վրա էլ է թանգ նստում. անգին ծախսեր պիտի անեմ. ես հօ չեմ կարող վնաս անել,—ասաց կապալառուն։

— Ինչու թանգ կը նստի. ջուրը ձրի, տեղը ձրի. մի մօտոր պէտք է դնես պատրաստի ջրի վրա, ու լարերը պէտք է ձգես, շատ շատ 1—2000 ռ. նստի,—ասաց Սերգօն.—չէ որ տարեկան մեզանից ուզում ես 2000 ռ., իսկ 30 տարում ինչ կը լինի։ Էդ փողերով գիւղը ինքը կարող է շինել կայանն էլ, մօտորն էլ, թելերն էլ. միայն մի վարպետի վարձ կը տանք։

— Չեմ կարող պակասել,—վճռականօրէն յայտնեց կապալառուն։

— Աղա,—ասաց մի գիւղացի.—իմ հէրը, իմ պապը տեսել չի էլեքտրը, հիմի էլ մենք առանց դրան էլ ենք եօլա գնում. էս պատերազմի տարում՝ պուդը 2 մանէթ ցորեն չէ ճարվում, մենք որտեղից ճարենք ամսական 1—2 ռ. տանք, տարեկան 12—24 ռ.։ Ես մի լամպէն տանս վառեմ, գոմը տանեմ, մարագը գնամ, թոնրատունը տանեմ թէ մառանս գնամ. չհանդամը նօթի ճրագը. ձեռաց՝ որտեղից ուզում ենք, էնտեղ ենք տանում, ուզած վախտը վառում, էնպէս վախտը հանգցնում։ Տարեկան նօթ եմ առնում 5—6 մանէթի, և ինձ հերիք է անում տանս, գոմիս, կալիս և այլն։ Չենք կարող։

— Չէ, էդ չի լինի. վճռել ենք,—ասաց պրիստաւը,—էս մարդկն էլ հրաւիրել ենք. հիմա սա եկել է, ընտրեցէք մարդիկ, որ ցուցակագրեն՝ քանի լամպա ուզող կը լինի, և կապեցէք պայմանը։

Ծածրակները քորեցին գիւղացիք, ու կամաց-կամաց ժողովից քաշվեցին։

Տանուտէրը հրամայեց ոչ ոքի չը թողնել դուրս գնալու, և կայացրին ընտրութիւն. գրեցին մի 2—3 մարդու անուն, որ նրանք ցուցակագրեն։ Անցնում է մի ամիս և հազիւ 100—150 լամպա են ուզում...։ Հարկաւ այս լուրը տարածվեց հեռուն՝ էլեքտրական լուսաւորութիւն գիւղին առաջարկողների թիւը շատացաւ, երևի պայմաններն էլ ձեռնտու կը դարձնեն. տեսնենք։

Մ. Ք. Էդիլեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Կովկասի փոխարքան ստացել Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրից հետևեալ հեռագիրը.

Յանձնարարում եմ ձեզ, կոմս, հաղորդել քաղաքային դումային Իմ շնորհակալութիւնը հինաւուրց Թիֆլիսի ներկայացուցիչների արտայայտած հըպատակութեան զգացմունքների համար, նաև մեր պանծալի քաջարի զօրքի օգտին աշխատելու պատրաստակամութեան համար։ «ՆԻԿՕԼԱՅ»։

Յիշեալ հեռագիրը պատասխան է կոմս Վօրօնցով-Դաշկովի ուղարկած հետևեալ հեռագրի. «Պարտականութիւն եմ վերցնում ինձ վրա ամենահպատակօրէն տեղեկացնել Ձերդ Կայսերական Մեծութեանը, որ Թիֆլիսի քաղաքային դուման, լսելով յունիսի 22-ի իր նիստում Բարձրագոյն ռեսկրիպտը յանուն մինիստրների խորհրդի նախագահի, որի մէջ հասարակական հաստատութիւնները և բոլոր քաղաքացիք կոչվում են համերաշխ աշխատանքի քաջարի զօրքի կարիքների համար և Պետական Դումայի զբաղմունքները վերսկսելու մասին, դիմեց ինձ քաղաքագլխի միջոցով խնդրելով առ ոտս Ձեր Կայսերական Մեծութեան արկանել Թիֆլիս քաղաքի ամբողջ ազգաբնակութեան ներկայացուցիչների հաւատարիմ հպատակութեան զգացմունքները, արտայայտելով լիակատար պատրաստակամութիւն ամեն ույժով աշխատել յօգուտ քաջարի զօրքի՝ մինչև ռուս զէնքի լիակատար յաղթութիւնը։ Գեներալ-ադիւտանտ կոմս Վօրօնցով-Դաշկով»։

◆ Թիֆլիսի նահանգապետը յայտնել է քաղաքագլխին, որ իր կողմից արգելք չը կայ, որպէսզի քաղաքը հողաբաժին յատկացնէ Նաւթլուղ քաղաքամասում եղբայրական գերեզմանատուն հիմնելու համար։

◆ Վերջին երեք ամիսների պրակտիկան ցոյց տուեց, Թիֆլիսի ոստիկանապետ փոխգնդապետ Ջղանօվսկիի կարծիքով, որ գինու սահմանափակ առևտուրը ունենում է բացասական հետևանք։ Յանցագործութիւնները նորից առատացել են. արբեցողութեան հողի վրա տեղի են ունեցել սպանութիւններ։ Քաղաքում դժուար չէ արբած մարդու հանդիպել։ Այդ այնքան էլ զարմանալի չէ, որովհետև գինի կարող է ձեռք բերել ով կամենայ, ինչքան ուզի, իսկ խըմել՝ որտեղ կամենայ։ Ոստիկանութեան մշտական կռիւը այդ կորստաբեր չարիքի դէմ իր նպատակին չէ հասնում, որովհետև, ինչպէս ասվեց, գինի կարելի է ձեռք բերել։ Թիֆլիսի նահանգապետի նշանակած տուգանքները, բանտարկութիւնը և գինետները փակելը նոյնպէս նպատակին չեն հասցնում։ Այդ պատճառով, ինչպէս մենք լսել ենք, ոստիկանապետը նորից միջնորդելու է, որպէսզի քաղաքում ընդմիշտ արգելվի գինու վաճառումը։

◆ «Т. Л.»-ը հաղորդում է, որ յուլիսի 1-ին լրացաւ Թիֆլիսի պօստ-հեռագրական շրջանի կառավարիչ ի. գ. խ. Գէրման Վ. Մուսէլիուսի ծառայութեան 40-ամեակը։ Յոբելեարը յայտնի է իբրև յարգելի ու սիրելի վարչագէտ և իբրև հմուտ կառավարիչ։

◆ Թիֆլիսում նոր երեք նոտարական գրասենեակ բանալու թոյլտուութիւնը վըճռվել է դրական մտքով։ Նոտարներից մինն է պ. Կորակաշը։

◆ Կովկասի փոխարքայի պալատում անցեալ օրը կայացաւ Կարմիր Խաչի ընկերութեան կովկասեան ճիւղի անդամների ընդհանուր ժողովը։ Վարչութեան լրացուցիչ անդամներ ընտրվեցին տ. Վօլսկայա, բժ. Գուգաձէ, Ռուդէնկօ, բժ. Զուդնօվսկի, Դաւիթ-խան-Սւան. Իւզբաշեան և Մինկէվիչ։

ԿՈՎԿԱՍ

◆ «Баку»-ի մէջ կարդում ենք. «Ահա արդէն երկրորդ շաբաթն է, որ որոնվում է Բագուից խորհրդաւոր կերպով անյայտացած նախկին պրիստաւ, տիտուլեարնի սովետնիկ, Գեօրգիէվսկիի ասպետ, Ղուբայի խոշոր կալուածատէր Իսա-բէկ Զուլֆուգարօվը։ Միաժամանակ անյայտացել է և նրա պարսկահպատակ խոհարար Մամէդ-Բէկիր Հասան-օղլին։ Իսա-Բէկի ընտանիքը ապրում է Ղուբայում, իսկ ինքն այստեղ էր բնակվում խոհարարի հետ։ Բոլոր որոնումները ցայսօր ոչ մի հետևանք չեն տուել, չը նայած որ ընտանիքը ձեռք է առել բոլոր միջոցները»։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Պ. Հ. Գ.-ը հաղորդում է, որ յուլիսի 1-ից դադարեց հրատարակվելուց Մոսկվայում 8 տարի լոյս տեսնող «Голосъ Москвы» օրաթերթը։

◆ Կիևում շաքարի 13 գործարանատէրեր միութիւն են կազմել՝ շաքարը միասին վաճառելու համար։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Վրացական «Նոր ակումբը» յանձնել է 2300 ռ. վերջին 2 ամիսների ընթացքում տեղի ունեցած զուարճութիւններից ստացված տոկոսը այն ֆոնդի համար, որով կառուցվելու է վրացական թատրոնի շէնքը։

◆ Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութիւնը մի յատուկ մասնաժողով է ընտրել, որ պաշտօն ունի պարզել Ակակի Ծերեթելիի մահից յետոյ մնացած գոյքի քանակութիւնը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Իւրաքանչիւր ակումբի այցելուների թւում հարկաւ քիչ չեն այնպիսինները, որոնք չը մասնակցելով ամենօրեայ լոտոյին և կամ թոյլատրված թղթախաղին՝ պահանջ են զգում ստանալ այլ տեսակի բաւականութիւն։

Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը այդպիսինների համար բացի սիմֆօնիկ լարանուագ երաժշտութիւնից, որի դիրիժօրն է մեր երիտասարդ երաժշտագէտ Գր. Միրզայեան, որ, ի դէպ է ասել, կարողանում է լիովին բաւարարել երաժշտասէր ունկնդիր հասարակութեանը, որոշել է հրաւիրել հայ դերասանական ընկերակցութեանը՝ ժողովարանի ամարային այգում շաբաթական մի անգամ ներկայացում տալու համար։

Առաջին ներկայացումը, որ տեղի ունեցաւ յուլիսի 2-ին—Շիրվանզադէի «Չար Ոգին»—լի սրահի ներկայութեամբ, ապացոյց էր, որ ժողովարանի մեծածիւ այցելուները զգում են ամառվայ ամիսների օրերը աւելի խելացիութեամբ ու մտաւոր ու հոգեկան բաւականութիւն ստանալով անց կացնելու կարիք ևս, որի համար անշուշտ շնորհակալութեան արժանի է աւագների խորհուրդը։

Ինչ վերաբերում է խաղին, մենք պէտք է մատնանշենք աջող անսամբլը և հարթ ու անբռնազբօսիկ խաղը շնորհիւ այդ անսամբլի փորձառու անդամների։ Բաւական է ասել, որ Գիժ-Դանէլի դերը կատարում էր տաղանդաւոր Աբէլեանը, որ տալով այդ ամբողջացրած դերին կոլորիտ բնոյթ հանդիսատեսի վրա թողնում է խորը տպաւորութիւն։

Աբէլեանի արժանի խաղընկեր հանդիսացան օրիորդ Ժամին (Սօնա), որի առաջադիմութիւնը քանիցս ընդգծել ենք անցեալներում։

Չենք կարող չը մատնանշել մեր հին բարեխիղճ դերասան Ազեանի մասնակցութիւնը մասնաւորապէս «Չար Ոգիի» Ոսկանի տիպիկ դերում, և ընդհանրապէս հայ թատրոնական ասպարէզում նորից երևան գալը մի քանի տարիների բացակայութիւնից յետոյ։

Ապա յիշենք տ. Մարգոյին (Շուշան), տ. Վարդիթերին (Զանիշան), օր. Անահիտին (Զաւահիր), պ. պ. Թորոսեանին (Զօհրաբ Կարապետ), Ալեքսանեան Մ-ին (Մուրադ) և Ղազարեանին (Միհրան)։

Ժողովարանի աւագների խորհուրդը նախատեսել է նաև խելացի ժամանցներ անդամների երեխաների համար։ Ռեցենզենտ

ՄԱՄՈՒԼ

Մ. ԿՈՎԱԼԵՎՍԿԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՅ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի ապագայ կարգաւորման հարցը, բացի մեզանից, զբաղեցնում է նաև օտարազգի գործիչների, որոնք առ հասարակ հետաքրքրվում են Հայաստանի անցեալով և հայ ազգի արդի կացութեամբ։

Այդ անձերի թւում անշուշտ շահեկան է լսել ռուս յայտնի գիտնական պրոֆէսոր Մ. Մ. Կովալեվսկիի կարծիքը, որ մի հիմնական յօդուածով, տպված «Вѣстникъ Европы» հանդէսի մէջ, ջանում է ուրուագծել Հայաստանի ապագայ կազմը։

Հաշւի առնելով անցեալը,—ասում է Կովալեվսկին,—պէտք է կարծել, որ մեծ պետութիւնները առաջիկայ կոնգրէսում ի նկատի կունենան նախ քան պատերազմը Հայաստանի աւտօնոմ կազմակերպութեան ձգտումները։

Ընդամէն մեծ պետութիւնները, յարգելի պրոֆէսորի կարծիքով, կառաջնորդվեն այն բնագրով, որպիսին առաջարկեց Ռուսաստանը և պաշտպանեցին Անգլիան ու Ֆրանսիան։

Իսկ եթէ այդպէս է, ուրեմն հայաբնակ և քիւրդաբնակ վիլայէթների ապագայ կազմաւորումը պատկերանում է մօտաւորապէս այսպէս։ Անատօլիայի հիւսիսային մասը կազմող վեց վիլայէթները կը միացվեն մի գեն.-նահանգապետի իշխանութեան ներքոյ։ Այդ պաշտօնական անձին տրվելիք անունը այնքան էլ նշանակութիւն չունի։ Արդեօք կանուանեն նրան իշխա՞ն թէ՞ ուղղակի փոխարքայ, այդ կախված կը լինի նրանից, թէ կը կազմէ՞, արդեօք, Հիւսիսային Հայաստանը պետութիւն-բուֆէր, որ կը լինի ամենամեծը Ռուսաստանի հովանու ներքոյ, թէ կապված կը լինի նրա հետ րէալ ունիայով, ճիշդ այնպէս՝ ինչպէս գոյութիւն ունի օրինակ Ֆինլանդիայի համար։ Այդ իշխանի կամ փոխարքայի ընտրութիւնը կոնգրէսին մասնակցող մեծ պետութիւնները հաւանօրէն իրանց կը թողնեն։ Բայց որ ընդամէն ղեկավար դերն ընկնում է Ռուսաստանի վրա, այդ պահանջում է հաւասարապէս այն վճռական նշանակութիւնը, որով նա օգտվում էր սկզբներում հայ-թիւրքական հարցի մէջ, և նրա դրութիւնը՝ իբրև մեծ ուղղափառ պետութեան, որի հովանու ներքոյ կանգուն է և պահում է իր ինքնուրոյնութիւնը հայ-լուսաւորչական եկեղեցին։

Գեներալ-նահանգապետին կից (իշխան լինի թէ փոխարքայ, դա միևնոյնն է) անհրաժեշտ կը լինի ստեղծել ժողովրդական ներկայացուցիչների պալատ... Որովհետև սկզբից դժուար կը լինի կազմել ազգաբնակութեան ստոյգ վիճակագրութիւն և որովհետև հայ և քիւրդ լիազօրների համեմատական սկզբունքի յայտարարութիւնը կարող է սկզբներում առաջ բերել տարաձայնութիւններ, ուստի օգտակար կը լինի, իմ կարծիքով, լուծել գորդեան հանգոյցը, ընդունելով որ ազգաբնակութեան քրիստոնեայ և մահմեդական մասերը ունենալու են պատգամաւորների հաւասար թիւ։

Պրոֆ. Կովալեվսկին անհրաժեշտ չէ գըտնում ստեղծել երկպալատեան սիստեմ մի երկրում, ուր չը կան արիստոկրատիա և խոշոր դրամագլուխներ։

Սակայն վերին պալատի բացակայութիւնը չէ նշանակում դեռ, թէ գեներալ-նահանգապետին կից ևս պէտք է բացակայէ վարչական-կրթական բարձր մարմին Պետական Խորհրդի ոճով։

Պրոֆ. Կովալեվսկիի կարծիքով, այդ մարմինը բաղկանալու է ընտրեալ և նշանակովի անդամներից և հաւասար թւով քիւրդերից և հայերից։

Իր յօդուածի մէջ յարգելի պրոֆէսորը չէ ծանրանում աւտօնոմ Հայաստանի ապագայ տէրրիտօրիալ կազմի հարցի վրա։

Ես,—ասում է նա,—չունեմ ձեռքիս տակ բաւականին նիւթ թէ Տրապիզոնի վիլայէթի և թէ Փոքր-Հայքի ու Կիլիկիայի հայ ու մահմէդական ազգաբնակութեան թւական փոխ-յարաբերութեան մասին։ Մեզ դաշնակից արևմտեան մեծ պետութիւնները գուցէ յօժարութեամբ չը համաձայնեն զիջել աւտօնոմ Հայաստանին Ալեքսանդրէտտի նաւահանգիստը, բայց կը գտնվեն այլ նաւահանգիստներ Կիլիկիայում, որ կարելի կը լինի ներկայ դէպքում տալ հայերին։

Իր յօդուածի վերջում պրոֆ. Կովալեվսկին ցանկութիւն է յայտնում, որպէսզի եւրոպական մեծ պետութիւնները ապագայ կոնգրէսում անհրաժեշտ ընդունեն պետութիւն ստեղծելու համար դնել նրա հիմունքում երկու քաղաքական ակսիոմայի քաղաքական վերածնութիւն։

Խղճի ու քաղաքացիների հաւասարութեան ազատութիւն օրէնքի, դատարանի, հարկի, պետական ծառայութեան առաջ։

Մեզ մնում է միայն ցանկանալ, որպէսզի յարգելի պրոֆէսորի լաւատեսութիւնն իրականանայ՝ որպէս վարձահատուցումն թիւրքահայի դարաւոր մարտիրոսագրութեան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մոզդոկ, 17 յունիսի

Մոսկվայում լոյս է տեսնում «Մարտ» ամսաթերթը, որը իր խեղճուկ բովանդակութեամբ ոչ միայն աչքի ընկնող մի նիւթ չի տալիս, այլ ինքն ըստ ինքեան, ով որ հետևել է նրա ուղղութեանը, լոյս տեսած օրից մինչև օրս, լոկ անձնական բնոյթ է կրում։ Նպատակիցս միանգամայն դուրս է այդ ամսաթերթի ուղղութիւնը քննադատել, միայն ցաւօք սրտի պէտք է ասեմ, որ երբ Մոսկվայում մի երկու տարի շարունակ ծեծվում էր քահանայի ընտրութեան հարցը և որի թեկնածուն հանգուցեալ Մկրտումեան քահանան էր, «Մարտ» ամսաթերթը, մի գլուխ, հանգուցեալ քահանայի պատիւն էր շօշափում և աշխատում էր ամեն կերպ, որ նրա ընտրութիւնը չաջողվի։ Սակայն, Մոսկվայի բանիմաց և ինտելիգենտ դասը շատ մօտ ճանաչում էր հանգուցեալ Մկրտումեանին, և ապրիլ ամսին ծխական ժողովը, ձայների մեծամասնութեամբ, հանգուցեալ Մկրտումեան քահանային իր ծխատէր ընտրեց։ Եւ «Մարտը» աւելի կատաղեց, սկսեց զանազան միջոցներ դիմել, ծխական ժողովը բեկանել տալու համար, բայց չը հասաւ իր նպատակին։

Հայր Մկրտումեանը մեռնում է։ Մոսկվայի հայ գաղութը, զրկվելով իր ապագայ արժանաւոր հովւից, հոգեհանգիստ է կատարում, և պ. Տոտոմեանը ճառ է խօսում, դրուատելով հանգուցեալի արժանաւոր կողմերը։ «Մարտի» յօդուածագիր Ց. Տէր-Միքայէլեան, վայելչութեան և քաղաքավարութեան սահմանից անցնելով, թոյլ է տալիս «Մարտի» մայիս ամսվայ № 9-ում գրել՝ «Մեռելի համար կամ լաւ, կամ ոչինչ. բայց այդ ասված է այն ժամանակ, եթէ մեռելի համար լաւ ասելը չափազանցութեան չը դիմէ»։ Ապա շարունակում է. «Հանգուցեալ Մկրտումեան քահանան 1903 թ. եկեղեցու բանալին իր ձեռին՝ ուրիշ կողմն էր մեկնած. միևնոյն ձեռը օրէորդաց գիմնազիայում, նոյնպէս ուրիշ կողմն էր տարած. և առ հասարակ (երևի) այդ տէրտէրական ձեռն էլ ուրիշ կողմն էր մեկնում»...։ Զրպարտիչ ու չարախօս յօդուածագիր պարոնը, օգտվելով հանգամանքից և ժամանակից, ձեռք-ձեռքի տուած խմբագրի հետ, իր անձնական հաշիւներն է մաքրում մի անշնչացած մարդու հետ՝ առանց փաստերի, զօռ տալով իր ուղեղին. հենց ինքը Ց. Տէր-Միքայէլեանն է, որ չափազանցութիւնների մէջ ընկնելով արատաւորում է մի յայտնի, ազնիւ գործչի, մեռած մարդու անունը. Տէր-Միքայէլեանը և նման անձնաւորութիւններ, առանց պատկառելու, համարձակվում են ասելու «մեռած մարդու համար կամ լաւ կամ ոչինչ», բայց իրանց ասածներն ի չարն են գործ դնում, և իրանք իրանց դատավճիռը կարդում։ Էլ ինչ ունի ասելու Ց. Տէր-Միքայէլեանը մեռած Մկրտումեան քահանայի անձնական ունեցած պակասութիւնների մասին. «Մարտի» էջերը բաց են նրա համար։ Բացի այդ՝ Ց. Տէր-Միքայէլեանը աւելացնում է. «Առ հասարակ տէրտէրական ձեռն էլ ուրիշ տեղեր է մեկնում»։

Հայր Սիմէօնեանը և պ. Տոտոմեանը Ց. Տէր-Միքայէլեանի վայրահաչութիւններին երևի չեն պատասխանի՝ աչքի առաջ ունենալով յօդուածագրի անձնաւորութիւնը։

Ց. Տէր-Միքայէլեանի յօդուածը հանգուցեալ Մկրտումեան քահանայի մասին՝ վերին աստիճանի ցաւալի տպաւորութիւն թողեց տեղիս ամբողջ հայ հասարակութեան վրա. հանգուցեալի յիշատակը յարգող տեղիս հայ հասարակութիւնը հոգեհանգիստ կատարել տուեց և նրա յիշատակը յարգելու համար՝ մի որոշ գումար ժողովեց և ուղարկեց «Մշակի» խմբագրութեանը, յատկացնելու այն՝ հանգուցեալի սիրած և նրա համար զոհված, հայ փախստականների օգտին։

Պարոններ, սանձահարեցէք ձեր կրքերը և ձեր ունեցած անձնական թշնամութիւնները. այլևս չը կայ նա, որ ձեզ նման զրպարտիչներին դատարան քարշ տայ... ամօթ է մեռած մարդու մասին զանազան անհիմն զրպարտութիւններ շռայլել՝ մահվանից յետոյ... Վախկոտ թոյլերը միայն ընդունակ են այդ դատապարտելի միջոցին դիմելու։ Բաւական է։

Խորէն Ք. Շահինեան

Ժամանակաւոր խմբագիր՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ
Հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր. երեկ.
№ 6	(արագ) »	12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր. երեկ.
	» Ջուլֆա	8 ժ. 5 ր. երեկ.
	» Բօրժոմ	3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4	Բաթումից—	5 ժ. 55 ր. երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր. երեկ.
№ 10	Բաթումից—	9 ժ. 51 ր. առաւ.
	Ջուլֆայից —	8 ժ. 11 ր. առաւ.
	Բօրժոմից —	7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գոլովինի, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—3 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ.ԺԻՇԿ ՏԵՐ-ԴԱՒԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—111

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„Մշակի“ խմբագրատանը
վաճառվում են
ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.

1) Հասարակութեան նեցուկները, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բաբայեանի	50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամ.-էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Բ-ի	40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի	60 կ.
4) Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի	50 կ.
5) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ. Ալ. Առաքելեանի	50 կ.
6) Մազդա, դրամա, 5 գործ. Լևոն Մանուէլեանի	40 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%։
Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ“, Тифлисъ.
(3) 0—1

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը սրանով յայտարարում է, որ դպրոցում նորեկ աշակերտների համար ազատ տեղեր կան Ա., Գ. և Դ. պատրաստական, II, III, IV, V, VI և VII դասարաններում։ Ցանկացողները պէտք է ներկայացնեն վերատեսչի անունով խնդիր մինչև օգոստոսի 20-ը, կցելով ծննդեան (մկրտութեան) և ուսման վկայականները։ Ա. պատ. մտնել ցանկացողները պէտք է լինեն ոչ աւելի քան 8 տարեկան, Գ. պատ. 12 տարեկան, Դ. պատ. 13 տարեկան, II դ. 15 տարեկան, III դ. 16 տարեկան, IV դ. 17 տարեկան, V դ. 18 տարեկան, VI դ. 20 տարեկան և VII դ. 21 տարեկան։ Քննութիւնները և վերաքննութիւնները կը սկսվեն օգոստոսի 25-ից։
444. 2—2

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը սրանով յայտնում է, որ իր խնամքին յանձնված դպրոցի համար առաջիկայ 1915/16 ուս. տարվայ համար հրաւիրվում է [illegible] 2 դ., [illegible] 5 դաս, [illegible] 2 դ. և Ա. պատ. կրօն 3 դաս, [illegible] 2 դ. և [illegible] 3 դ. [illegible] 1 դ. [illegible] 16 դաս 2 դ. [illegible] 50-ական [illegible]
Անհրաժեշտ [illegible] օգոստոսի 20-ը այս հասցէով։ Тифлисъ, Попечительству Армянской Нерсисянъ Семинаріи.
445. 2—2

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.